Հավելված
Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության
պաշտպանության պետական հանձնաժողովի
2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 77-Ա որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2014 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2015թ.

Բովանդակություն

Ներածություն 3
Գլուխ 1. Համառոտ տեղեկատվություն Հանձնաժողովի գործունեության մասին 4
Գլուխ 2. Ապրանքային շուկաների վերլուծություն 11
Գլուխ 3. Տնտեսական մրցակցության կարգավորման և վերահսկման ուղղությամբ իրականացված միջոցառումները.....22
Գլուխ 3.1 Մրցակցային իրավիճակի բարելավմանն ուղղված առաջարկների իրականացման ընթացքի վերլուծություն 29
Գլուխ 4. Հանձնաժողովի գործունեության ֆինանսական հաշվետվություն 31

Ներածություն

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2014 թվականի տարեկան գործունեության հաշվետվությունը կազմվել է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) դրույթներին համապատասխան:

Հանձնաժողովի գործունեությունը նպատակաուղղվել է «Հանձնաժողովի 2014 թվականի տարեկան գործունեության ծրագրի» կատարմանը, Օրենքով ամրագրված գործառույթների իրականացմանը և միջազգային պայմանագրերով սահմանված՝ տնտեսական մրցակցության բնագավառին առնչվող պարտավորությունների կատարմանը:

Առկա հիմնախնդիրների լուծման նպատակով Հանձնաժողովը 2014 թվականին շարունակել է աշխատանքները հետևյալ հիմնական ուղղություններով.

ա) տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացման,

բ) տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտման դեպքերի քննարկման և համապատասխան որոշումների ընդունման,

գ) Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների դատական կարգով բողոքարկմանն ակտիվ մասնակցության ցուցաբերման,

դ) Օրենքում փոփոխությունների և լրացումների կատարման, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից ենթաօրենսդրական ակտերի (կարգերի) ընդունման և կատարելագործման,

ե) ապրանքային շուկաներում դիտանցումների, վերլուծությունների և ուսումնասիրությունների միջոցով Օրենքի հնարավոր խախտումների բացահայտման, կանխման և արգելման,

զ) ձեռնարկատիրության զարգացման և սպառողների շահերի պաշտպանության նպատակով մրցակցության խրախուսմանը նպաստման,

է) պետական մարմինների, միջազգային կառույցների և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության,

ը) Հանձնաժողովի գործունեության հրապարակայնության ապահովման, հասարակության իրազեկման:

Գլուխ 1. Համառոտ տեղեկատվություն Հանձնաժողովի գործունեության վերաբերյալ

Հիմք ընդունելով ներածությունում ամրագրված հիմնական ուղղությունները՝ սույն գլխում ներկայացված են համառոտ տեղեկություններ Հանձնաժողովի գործունեության վերաբերյալ:

Հանձնաժողովը 2014 թվականի ընթացքում ընդունել է 593 որոշում: Հարուցվել է 332 վարչական վարույթ, որից 217-ը Հանձնաժողովի սեփական նախաձեռնությամբ, իսկ 115-ը՝ համապատասխան դիմումների հիման վրա: Հանձնաժողովի կողմից ընդունվել են պատասխանատվության միջոցներ սահմանող որոշումներ, որոնցից 38-ը առնչվել են անբարեխիղճ մրցակցությանը, 3-ը՝ գերիշխող դիրքի չարաշահմանը, 88-ը՝ չհայտարարագրված համակենտրոնացումներին և այլն: Հանձնաժողովի կողմից 2014 թվականին ընդունված որոշումների արդյունքում, այդ թվում նաև նախորդ տարիների, 2014 թվականին սահմանված կարգով պետական բյուջե փոխանցված տուգանքների գումարը կազմել է 132 մլն դրամ:

Հանձնաժողովը 2014 թվականի ընթացքում նույնպես իր ուշադրությունն առավել կենտրոնացրել է սոցիալական նշանակություն ունեցող ապրանքային շուկաներում և երկրի տնտեսության համար կարևոր ոլորտներում առկա մրցակցային խնդիրների բացահայտման վրա: Մասնավորապես, աշխատանքներ են իրականացվել ապրանքային շուկաներում մուտքի խոչընդոտների բացահայտման և կանխարգելման, պետական գնումների կազմակերպման գործընթացում մրցակցային օրենսդրության խախտումների ուղղությամբ:

Հանձնաժողովի կողմից տարվա ընթացքում հայտնաբերվել են գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կողմից մրցակցային օրենսդրության խախտման դեպքեր, որոնց առնչությամբ Հանձնաժողովը կայացրել է համապատասխան որոշումներ և կիրառել պատասխանատվության միջոցներ:

Հանձնաժողովը 2014 թվականի ընթացքում իրականացրել է բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնք ուղղված են եղել ոլորտներում և ապրանքային շուկաներում մրցակցային իրավիճակի որոշմանը, ինչպես նաև դրանցում առկա մրցակցությունը խոչընդոտող հանգամանքների բացահայտմանը:

Հանձնաժողովն իրականացրել է աշխատանքներ համակենտրոնացումների կարգավորման ուղղությամբ, որոնք միտված են ապրանքային շուկաներում մրցակցային պայմաններ ապահովելուն և մրցակցությունը սահմանափակող, ինչպես նաև գերիշխող դիրքի հանգեցնող կամ այդ դիրքն ամրապնդող գործարքների նկատմամբ հսկողություն իրականացնելուն: Ի դեպ, վերջին տարիներին զգալի աճ է նկատվել համակենտրոնացումներին առնչվող վարչական վարույթների հարուցման առումով, ինչը պայմանավորված է Հանձնաժողովի կողմից տնտեսվարող սուբյեկտների և հասարակության իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացմամբ: Միաժամանակ, Օրենքի հնարավոր խախտումների բացահայտման նպատակով՝ Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության հիման վրա տարվա ընթացքում կատարվել են ուսումնասիրություններ տնտեսվարող սուբյեկտների միացումների, միաձուլումների, ինչպես նաև տնտեսվարող սուբյեկտի կողմից այլ տնտեսվարող սուբյեկտի փայաբաժնի, ակտիվների ձեռքբերումների և այլ միավորումների վերաբերյալ:

Հանձնաժողովը 2014 թվականի ընթացքում բացահայտել է նաև անբարեխիղճ

մրցակցության դրսևորումների բազմաթիվ դեպքեր, որոնց առնչությամբ Հանձնաժողովի կողմից կիրառվել են համապատասխան պատասխանատվության միջոցներ, ինչպես նաև տրվել խախտումները դադարեցնելու և հետագայում դրանք բացառելու հանձնարարականներ:

Շարունակվել է համագործակցությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի (այսուհետ՝ ԼՂՀ ՀԾՏՄԿՊՀ) հետ, որի շրջանակներում Հանձնաժողովի կողմից կազմակերպվել են քննարկումներ դեղերի շուկայում գնագոյացման գործընթացների ուսումնասիրությանն առնչվող մեթոդաբական հարցերի և առկա փորձի փոխանակման աշխատանքների իրականացման վերաբերյալ:

Հանձնաժողովի պատվիրակությունը 2014 թվականի հունիսին աշխատանքային այցով մեկնել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն: Այցի շրջանակներում Հանձնաժողովի նախագահը հանդիպում է ունեցել ԼՂՀ վարչապետի և ԼՂՀ ՀԾՏՄԿՊՀ-ի նախագահի հետ, որի ընթացքում երկու մարմինների միջև կնքվել է համագործակցության նոր համաձայնագիր:

Հանձնաժողովի և ԼՂՀ ՀԾՏՄԿՊՀ-ի միջև համագործակցության շրջանակներում ԼՂՀ ՀԾՏՄԿՊՀ-ի աշխատակիցները փորձի փոխանակման նպատակով հրավիրվել և մասնակցել են Հանձնաժողովի կողմից կազմակերպված սեմինարներին, քննարկումներին: Հանձնաժողովի և ԼՂՀ ՀԾՏՄԿՊՀ-ի նախագահների ձեռքբերած պայմանավորվածության համաձայն՝ ԼՂՀ ՀԾՏՄԿՊՀ-ի չորս աշխատակից գործուղվել են Հանձնաժողով՝ մասնակցելու իրականացվող վարչական վարույթներին: Բացի այդ, Հանձնաժողովը հրապարակել է 2010-2013 թվականների ընթացքում համատեղ աշխատանքների ու համագործակցության արդյունքների վերաբերյալ գրքույկ և Հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում առանձին էջով ներկայացրել ԼՂՀ ՀԾՏՄԿՊՀ-ի մասին տեղեկություններ:

2014 թվականի ընթացքում շարունակվել է համագործակցությունը նաև այլ պետական մարմինների հետ, քանի որ Հանձնաժողովի կողմից իրականացվող ուսումնասիրությունների արդյունքները փաստում են, որ շատ դեպքերում հավասար մրցակցությունը խաթարող գործոններն առնչվում են այլ պետական մարմինների իրավասություններին, նրանց կողմից ընդունվող իրավական ակտերին, տրամադրվող լիցենզիաներին և այլն: Այսպես, 2014 թվականի ընթացքում Հանձնաժողովի կողմից մի շարք ոլորտներում բացահայտված խնդիրների ուսումնասիրությունների արդյունքները, որոնք գտնվել են այլ պետական մարմինների իրավասությունների ներքո, տրամադրվել են համապատասխան իրավասու մարմիններին՝ վերջիններիս իրավասությունների և լիազորությունների կարգավորման շրջանակներում գտնվող և տարբեր ապրանքային շուկաներում մրցակցային միջավայրի վրա բացասական ազդեցություն ունեցող խնդիրների կարգավորման նպատակով:

Հանձնաժողովի աշխատանքներն առավելագույնս հրապարակային և թափանցիկ դարձնելու նպատակով, 2014 թվականի ընթացքում Հանձնաժողովն ակտիվ գործունեություն է ծավալել մրցակցության ոլորտում իրականացված աշխատանքների և դրանց արդյունքների վերաբերյալ հասարակության իրազեկման ուղղությամբ:

Ըստ այդմ, Հանձնաժողովը, ակտիվորեն համագործակցելով զանգվածային լրատվական միջոցների հետ, հասարակությանն իրազեկել է տարվա ընթացքում իրականացված կարևոր միջոցառումների, Հանձնաժողովի նիստերի, պաշտոնական

հանդիպումների և այցերի մասին: Առավել կարևոր և հրատապ թեմաների շուրջ ըստ անհրաժեշտության կազմակերպվել են մամուլի ասուլիսներ: Տարվա ընթացքում պարբերաբար լուսաբանվել են Հանձնաժողովի նախագահի և աշխատակազմի միջազգային հանդիպումները, մասնավորապես ԵՏՄ անդամակցելու շրջանակներում կատարվող ծրագրային և օրենսդրական աշխատանքները, ինչպես նաև Հանձնաժողովի աշխատանքների արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումները:

Ինչպես և նախորդ տարիներին, 2014-ին ևս շարունակվել են կլոր-սեղանի ձևաչափով անցկացվող սեմինար-քննարկումները՝ տնտեսական ոլորտը լուսաբանող մոտ 2 տասնյակ լրագրողների մասնակցությամբ:

Հանձնաժողովը 2014 թվականի դեկտեմբերին կազմակերպել է գործարարների հետ հանդիպում, որի ընթացքում քննարկվել են Եվրասիական տնտեսական միությանն անդամակցելու շրջանակներում տնտեսական մրցակցության օրենսդրության կիրարկմանն առնչվող հարցեր:

Միաժամանակ, հասարակության իրազեկվածության մակարդակի բարձրացման նպատակով տարբեր լրատվամիջոցների, ինչպես նաև սոցիալական ցանցերի միջոցով պարբերաբար հեռարձակվել են տեղեկատվական-քարոզչական հոլովակներ, ինչպես նաև տպագրվել և տարածվել են տեղեկատվական նյութեր և ուղեցույցներ:

Հանձնաժողովի աշխատանքների արդյունավետության բարձրացմանը մեծապես նպաստել է նաև գործող թեժ գիծը, որի միջոցով քաղաքացիներն ահազանգում են մրցակցային իրավախախտումների մասին, ինչը Հանձնաժողովին հնարավորություն է տալիս գործուն կերպով արձագանքելու և մրցակցային խնդրի առկայության դեպքում իրականացնելու համապատասխան միջոցառումներ:

Հանձնաժողովի պաշտոնական կայք-էջի դեռևս նախորդ տարվանից սկսված ծրագրային վերազինման աշխատանքները գրեթե ավարտվել են, և արդեն իսկ բոլոր նորությունները, մամուլի հաղորդագրությունները, ինչպես նաև տեղեկատվական նյութերը հասանելի են հասարակությանը: Կայքը դարձել է առավել թափանցիկ, ավելացվել են մի շարք ենթաբաժիններ, որոնք հանրությանը տրամադրում են առավել մանրամասն ու ամբողջական տեղեկատվություն Հանձնաժողովի գործունեության վերաբերյալ:

Հանձնաժողովի գործունեությանն առնչվող օրենսդրության կատարելագործման նպատակով 2014 թվականի ընթացքում ուսումնասիրվել են Հանձնաժողովի կողմից ընդունված ենթաօրենսդրական ակտերը, որոնց ընթացքում հայտնաբերվել են որոշ թերություններ: Նշված թերությունների վերացման նպատակով մշակվել են մի շարք ենթաօրենսդրական ակտերի նախագծեր, որոնք ընդունվել են Հանձնաժողովի կողմից:

Հանձնաժողովը 2014 թվականի ընթացքում ակտիվություն է ցուցաբերել նաև միջազգային համագործակցության շրջանակներում, որն առավելապես դրսևորվել է հետևյալ ուղղություններով.

1. Եվրասիական տնտեսական միությանը (այսուհետ՝ ԵՏՄ) անդամակցության շրջանակներում իրականացվող համագործակցություն

Հանձնաժողովը ԵՏՄ անդամակցության շրջանակներում հանդիսանալով մրցակցության հարցերով աշխատանքային խմբի (բնական մենաշնորհներ, մրցակցային քաղաքականության և պետական (մունիցիպալ) գնումների ոլորտներ) համակարգող՝ մի շարք աշխատանքներ է իրականացրել մրցակցային քաղաքականության և պետական (մունիցիպալ) գնումների, ինչպես նաև բնական մենաշնորհների ոլորտներին վերաբերող հարցերի առնչությամբ: Մասնավորապես,

կատարվել է նշված ոլորտներին առնչվող ՀՀ օրենսդրության համեմատական իրավական վերլուծություն, որոշվել են ՀՀ իրավական ակտերի այն ցանկերը, որոնցում անհրաժեշտ է կատարել փոփոխություններ Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի նշված ոլորտների իրավապայմանագրային բազային համապատասխանեցնելու նպատակով, արդիականացվել են մրցակցային քաղաքականության և պետական (մունիցիպալ) գնումների ոլորտներում Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի մարմինների պարտադիր կատարման ենթակա միջազգային պայմանագրերի և որոշումների ցանկերը: Հանձնաժողովը 2014 թվականի ընթացքում Ռուսաստանի Դաշնության մայրաքաղաք Մոսկվայում մասնակցել է ոլորտային աշխատանքային խմբերի նիստերին, ինչպես նաև Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ոլորտային մասնագետների հետ խորհրդատվական հանդիպումներին:

Եվրասիական տնտեսական միությանը ՀՀ-ը միանալու շրջանակում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մրցակցության և հակամենաշնորհային կարգավորման կոլեգիայի անդամ (նախարար) Նուռլան Ալդաբերգենովի հրավերով 2014 թվականի նոյեմբերին Հանձնաժողովի նախագահը մասնակցել է Բելառուսի Հանրապետության Վիտեբսկ քաղաքում կայացած «Տնտեսության տարբեր ճյուղերի ապրանքային շուկաներում մրցակցության հավասար պայմանների ապահովման իրավական ասպեկտները» թեմայով միջազգային համաժողովին:

2. Միջազգային կառույցների և գործընկեր երկրների մրցակցային մարմինների հետ համագործակցություն

Հանձնաժողովն Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ/WTO), ՀՀ-ԵՄ գործընկերության ու համագործակցության համաձայնագրի (ENP), Արևելյան գործընկերության, Խոր և համապարփակ ազատ առևտրի գոտու համաձայնագրի (ԽՀԱԱԳ/DCFTA) շրջանակներում մասնակցել է բանակցային գործընթացներին, ներկայացրել ՀՀ-ում մրցակցության քաղաքականության կիրարկման ուղղությամբ իրականացվող վերջին զարգացումները և տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն: Հանձնաժողովի ներկայացուցիչները հանդիպումներ են ունեցել ՀՀ-ում Եվրոպական միության պատվիրակության քաղաքական, տնտեսական և տեղեկատվական բաժնի ղեկավարի հետ: Հանդիպումների ընթացքում քննարկվել են Հանձնաժողովի հետ հետագա համագործակցության ուղղությունները, որի արդյունքում Հանձնաժողովը նոր ծրագրի առաջարկ է ներկայացրել Եվրոպական միության պատվիրակություն:

Բազմակողմ համագործակցության շրջանակներում անդամակցելով Միջազգային մրցակցության ցանց (ՄՄՑ/ICN) կազմակերպությանը՝ Հանձնաժողովը վերջինիս աշխատանքային խմբերի կողմից ներկայացված հարցաշարերով համապատասխան տեղեկատվություն է ներկայացրել ՀՀ-ում մրցակցության ոլորտին առնչվող զարգացումների վերաբերյալ:

Հանձնաժողովը, ԱՊՀ անդամ-պետությունների հակամենաշնորհային քաղաքականության միջպետական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) աշխատանքների շրջանակներում, 2014 թվականի ապրիլին մասնակցել է Ղազախստանի Հանրապետության Ալմաթի քաղաքում, իսկ 2014 թվականի սեպտեմբերին Ռուսաստանի Դաշնության Նիժնի Նովգորոդ քաղաքում կայացած Խորհրդի ներքո Գովազդի կոորդինացիոն խորհրդի հերթական՝ 12-րդ և 13-րդ նիստերին: Նիստերի ընթացքում քննարկվել են ԱՊՀ անդամ-պետություններում գովազդի ոլորտի արդի

խնդիրները, մասնավորապես՝ գովազդի դերն ու նշանակությունը զբոսաշրջության զարգացման ոլորտում, համաշխարհային գովազդային շուկայի զարգացման միտումները, ԱՊՀ անդամ-պետություններում առկա ինտերնետ-գովազդի շուկայի իրավիճակը, ինչպես նաև գովազդի ոլորտի ինքնակարգավորման զարգացմանն առնչվող հարցեր:

Հանձնաժողովի նախագահը Ռուսաստանի Դաշնության դաշնային հակամենաշնորհային ծառայության ղեկավարի հրավերով 2014 թվականի հունիսին մասնակցել է Միջազգային իրավաբանական համաժողովին և դրա շրջանակներում ՌԴ դաշնային հակամենաշնորհային ծառայության կողմից կազմակերպված «Մրցակցային քաղաքականության զարգացումն ինտեգրացիոն միավորումների շրջանակներում» կլոր սեղան ձևաչափով հանդիպմանը, որի ընթացքում հանդես է եկել «Ինտեգրացիոն միավորումների շրջանակում մրցակցային քաղաքականության զարգացումը» թեմայով զեկույցով:

Հանձնաժողովի նախագահը 2014 թվականի սեպտեմբերին Ռուսաստանի Դաշնության Սանկտ Պետերբուրգ քաղաքում մասնակցել է «Մրցակցության օրը Ռուսաստանում» ամենամյա միջազգային միջոցառմանը և դրա շրջանակներում կայացած Խորհրդի 40-րդ հերթական և Խորհրդի ներքո գործող ԱՊՀ անդամ-պետություններում հակամենաշնորհային օրենսդրության խախտման համատեղ ուսումնասիրությունների շտաբի 21-րդ նիստերին: Խորհրդի նիստի ընթացքում օրակարգում ընդգրկված հիմնական հարցերի շարքում քննարկվել են նաև ԱՊՀ անդամ-պետություններում դեղերի շուկաներում կատարված ուսումնասիրությունների և այդ շուկաներում առկա մրցակցային իրավիճակների վերաբերյալ հարցեր: Այդ ընթացքում Հանձնաժողովի նախագահը ներկայացրել է դեղերի զուգահեռ ներմուծմանն առնչվող ՀՀ-ը փորձը:

Խորհրդի ներքո գործող ԱՊՀ անդամ-պետություններում հակամենաշնորհային օրենսդրության խախտման համատեղ ուսումնասիրությունների շտաբի աշխատանքների շրջանակներում Հանձնաժողովը մասնակցել է դեղերի, ցորենի, նավթի և նավթամթերքների ապրանքային շուկաներում իրականացվող համատեղ ուսումնասիրություններին, ինչպես նաև սննդամթերքի մանրածախ գների մոնիտորինգին:

Հանձնաժողովը 2014 թվականի նոյեմբերին Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում մասնակցել է Ռուսաստանի Դաշնության հակամենաշնորհային ծառայության և «Աջակցություն մրցակցության զարգացմանը ԱՊՀ անդամ-պետություններում» ոչ առևտրային ընկերակցության համատեղ կազմակերպված «Բելառուսի Հանրապետության հակամրցակցային օրենսդրության կիրառման գործնական հարցեր» թեմայով համաժողովին:

Հանձնաժողովը 2014 թվականի ընթացքում շարունակել է իր համագործակցությունը ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման համաժողովի հետ «Հայաստանի օրինակով մրցակցային քաղաքականության փորձագիտական գնահատում» թեմայով զեկույցի (այսուհետ՝ Զեկույց) շրջանակներում և պարբերաբար տրամադրել է Զեկույցում ներկայացված առաջարկությունների ուղղությամբ իրականացված աշխատանքների վերաբերյալ տեղեկություններ: Միաժամանակ, Հանձնաժողովն իր առաջարկություններն է ներկայացրել «Սպառողների շահերի պաշտպանության մասին» ՄԱԿ-ի ուղեցույցի վերաբերյալ, որը պետք է հրապարակվի 2015 թվականին:

Հանձնաժողովը 2014 թվականի ընթացքում համագործակցել է Արժույթի

միջազգային հիմնադրամի (այսուհետ՝ ԱՄՀ/IMF) հետ «Երկարաձգվող ֆինանսավորման ծրագրի» ներքո 2014 թվականի փետրվարին հրապարակված «Հայաստանի Հանրապետություն. Մտադրությունների մասին նամակ»-ի կառուցվածքային բարեփոխումների բաժնի մրցակցության ոլորտին առնչվող հենանիշերի իրագործման գործընթացի շրջանակում: Մասնավորապես, Հանձնաժողովի առաջարկի հիման վրա ՀՀ առողջապահության նախարարության կողմից ՀՀ Ազգային ժողով ներկայացված օրենսդրական փոփոխությունների փաթեթում ներառվել են դրույթներ, որոնց նպատակն է թույլատրել տարածման այլընտրանքային ուղիներով դեղերի և դեղամիջոցների զուգահեռ ներմուծումն իրականացնելու հնարավորությունը՝ տնտեսական մրցակցությունը խրախուսելու և տնտեսվարող սուբյեկտների ծախսերը նվազեցնելու համար:

Հարկ է նշել, որ Հանձնաժողովի նախագահը հանդիպում է ունեցել ԱՄՀ-ի տարածաշրջանային ղեկավարի հետ, որի ընթացքում քննարկվել են Հանձնաժողովին ստուգումներ իրականացնելու լիազորությունների վերապահման (վաղորդյան այցեր/dawn raids), այս կապակցությամբ, ՀՀ ոստիկանության տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի վարչության, ՀՀ ՊԵԿ-ի և ՀՀ գլխավոր դատախազության հետ համագործակցության հուշագրերի կնքման, ինչպես նաև սպառողների շահերի պաշտպանության տեսանկյունից մրցակցության հետ կապված հարցեր: Համաձայն հանդիպման ընթացքում ձեռք բերված պայմանավորվածության՝ Հանձնաժողովը մշակել է համագործակցության և տեղեկատվության փոխանակման վերաբերյալ հուշագրերի նախագծեր:

Հանձնաժողովի մշտական ուշադրության կենտրոնում են գտնվում կայուն զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացումը, որոնք նպաստում են մրցակցային միջավայրի բարելավմանը, մրցակցային քաղաքականության զարգացմանը: Հանձնաժողովը 2014 թվականի դեկտեմբերին հանդիպում է ունեցել Համաշխարհային բանկի (այսուհետ՝ ՀԲ/WB) Զարգացման քաղաքականության գործառնությունների 3-րդ վարկի որոշման առաքելության ներկայացուցիչների հետ «Զարգացման քաղաքականության նոր գործառնություն» ծրագրի շրջանակում: Հանդիպման ընթացքում քննարկվել են ՀԲ-ի հետ հետագա համագործակցության հարցեր:

3. Տնտեսական մրցակցության քաղաքականության կիրարկման քարոզչության, Հանձնաժողովի կադրային ներուժի հզորացման, կարողությունների զարգացմանն ուղղված համագործակցություն

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (այսուհետ՝ ԳՄՀ/GIZ) և Հանձնաժողովի միջև կնքված փոխըմբռնման հուշագրի գործողությունների ծրագրից ելնելով՝ հանրային քարոզչության և իրազեկվածության բարձրացման նպատակով ԳՄՀ աջակցությամբ 2014 թվականի առաջին եռամսյակում կրկին հեռարձակվել են Հանձնաժողովի գործունեությունը լուսաբանող և մրցակցային օրենսդրության որոշ դրույթներ մեկնաբանող տեսահոլովակները:

ԳՄՀ աջակցությամբ 2014 թվականի մարտին Ծաղկաձորում տեղի է ունեցել անբարեխիղճ մրցակցության հարցերով կլոր սեղան ձևաչափով քննարկում տնտեսական ոլորտը լուսաբանող լրագրողների, գործարարների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, ԵՄ փորձագետի մասնակցությամբ: 2014 թվականի հունիսին «Անի Պլազա» հյուրանոցում տեղի է ունեցել «Մրցակցային խնդիրները փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտում» կլոր սեղան ձևաչափով աշխատանքային քննարկում Հանձնաժողովի անդամների, աշխատակիցների, ԳՄՀ,

ինչպես նաև փոքր և միջին ձեռնարկատիրության ներկայացուցիչների մասնակցությամբ:

Հանձնաժողովը բանակցություններ է վարել Հանձնաժողովի ինտերնետային կայքի տեխնիկական խնդիրների լուծմանն աջակցելու նպատակով: Արդյունքում ԳՄՀ աջակցել է տեխնիկական թերությունները վերացնելու հարցում:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Բուդապեշտում մրցակցության հարցերով տարածաշրջանային կենտրոնի հետ համագործակցության շրջանակներում Հանձնաժողովի ներկայացուցիչները մասնագիտական գիտելիքներն ու աշխատանքային ունակությունները կատարելագործելու նպատակով 2014 թվականի ընթացքում մասնակցել են մրցակցության հարցերով թվով 5 սեմինարների ու աշխատաժողովների (7 մասնակից):

.

Գլուխ 2. Ապրանքային շուկաների վերլուծություն

Նպատակ ունենալով ՀՀ-ում ձևավորել արդյունավետ մրցակցային միջավայր՝ Հանձնաժողովը պարբերաբար իրականացրել է առանձին ապրանքային շուկաների ուսումնասիրություններ, որոնց միջոցով նաև հսկողություն է սահմանել տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության դրույթների պահպանման նկատմամբ: Տնտեսության բազմաթիվ ոլորտների ապրանքային շուկաներում Հանձնաժողովի կողմից կատարվող ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս վերհանել դրանցում առկա մրցակցային խնդիրները և տալ գործուն լուծումներ: Միաժամանակ կատարված ուսումնասիրությունները նպատակ են ունեցել.

1. բացահայտել ապրանքային շուկաներում ընկերությունների ունեցած իրացման մասնաբաժնի ներկայիս մակարդակը, ինչպես նաև իրավիճակի ձևավորման հնարավոր պատճառները,
2. ապրանքային շուկաներում տեղի ունեցող գործընթացները դիտարկել դինամիկ փոփոխությունների համատեքստում,
3. պարզել ապրանքային շուկաների զարգացման հեռանկարները՝ մրցակցային իրավիճակի բարելավման տեսանկյունից:

Համաձայն վերոգրյալի՝ Հանձնաժողովը 2014 թվականի ընթացքում, ի թիվս այլ ոլորտների և ապրանքային շուկաների, ուսումնասիրել է նաև կաթնամթերքի ոլորտի (թթվասեր, պաստերացված և ստերիլիզացված (մանրէազերծված) կաթ, մածուն և քամած մածուն, յոգուրտ, կեֆիր, կաթնաշոռ), պանրի և շշալցված հանքային ջրերի շուկաները:

Նշված ուսումնասիրությունների շրջանակներում դիտարկվել են կաթնամթերքի, պանրի և հանքային ջրերի արտադրության և իրացման ընդհանուր պայմանները, որոնք նպատակ են հետապնդել վերհանել տվյալ բնագավառում գործող ընկերությունների մրցակցային վարքագծին առնչվող խնդիրները, այդ թվում՝ գործարարության զարգացմանը խոչընդոտող գործոնները, որոնց լուծումը կհանգեցնի ոլորտում գործող ընկերությունների թվի ավելացմանը և կխորացնի տարբեր ընկերությունների միջև մրցակցային պայքարն ապրանքների իրացման ծավալների ընդլայնման, որակի բարձրացման ապահովման և ձեռքբերման մատչելի գնի սահմանման համար:

Կաթնամթերքի ոլորտի և պանրի շուկաների ուսումնասիրություն

Համաձայն կատարված վերլուծության արդյունքների՝ 2011-2013 թվականների և 2014 թվականի I կիսամյակի ընթացքում կաթնամթերքի ոլորտի դիտարկվող շուկաներում արտադրության և իրացման ցուցանիշներով առաջատար ընկերություններ են հանդիսացել «Աշտարակ-Կաթ», «Դուստր Մարիաննա» և «Թամարա և Անի» ընկերությունները, որոնց ընդհանուր բաժինը դիտարկված ընկերությունների իրացման կառուցվածքում 2014 թվականի I կիսամյակի ընթացքում կազմել է ավելի քան 80 տոկոս: Միաժամանակ պանրի արտադրության և ներմուծման բնագավառում դիտարկված 34 ընկերությունների շրջանում իրացման ցուցանիշներով առաջատար ընկերություններ են հանդիսացել «ԲԻ ԵՎ ՋԻ ՖՈՒԴ», «Դուստր Մելանյա» և «Արաքս-2» ընկերությունները, որոնց ընդհանուր բաժինը դիտարկված ընկերությունների մեջ 2014 թվականի I կիսամյակի ընթացքում կազմել է 45 տոկոս:

Տվյալ դեպքում նկատելի է, որ շուկաներում խոշոր ընկերությունների առկայությունը դեռևս չի նշանակում ընկերությունների միջև մրցակցության

բացակայություն: Պարզապես նշված շուկաներում մեծանում են այդպիսի ընկերությունների կողմից մրցակցային օրենսդրության խախտումներ կատարելու հնարավոր ռիսկերը:

Կաթնամթերքի և պանրի շրջանառության բնագավառներում ձևավորված ներկայիս իրավիճակի ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովի կողմից բացահայտվել են գործունեության իրականացման համար խոչընդոտ հանդիսացող հետևյալ գործոնները.

- **Արտադրության ընդլայնմանը խոչընդոտող գործոններ**

Ընկերությունների կողմից որպես արտադրությանը խոչընդոտող առաջնային գործոններ առանձնացվել են հատկապես ֆինանսական միջոցների հասանելիությունը, ընթացակարգային խոչընդոտները, ենթակառուցվածքների (իրացնող մասնագիտացված ընկերություններ, համապատասխան պահեստային տարածքներ և այլն) թերզարգացվածությունը, համապատասխան մասնագիտական կրթություն չունեցող աշխատուժի առկայությունը: Նշված գործոնների թվում ընկերությունների կողմից հատկապես կարևորվում է ֆինանսական միջոցների հասանելիության խնդիրը, և այս առումով էական հանգամանք են հանդիսանում ֆինանսական կազմակերպությունների կողմից ընկերություններին ֆինանսական միջոցների տրամադրման պայմանները: Մասնավորապես, ներգրաված միջոցների դիմաց վճարվող տոկոսադրույքի մակարդակն էապես ազդում է ընկերությունների կողմից ֆինանսական միջոցներին հասանելիության վրա և խոչընդոտ հանդիսանում շուկաներում մրցակցության խորացման ու գործարարության հետագա ընդլայնման համար: Միաժամանակ հարկ է նշել, որ ընկերությունները պատրաստակամություն են հայտնել կատարել նոր ներդրումներ վարկերի տոկոսադրույքի մակարդակի իջեցման (ակնկալվող տոկոսադրույք է նշվում 5-11 տոկոսը) պարագայում:

- **շուկաներում գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ մեծ ծավալի ֆինանսական միջոցներ և կատարված ներդրումների հետգնման համար պահանջվող համեմատաբար երկար ժամանակահատված**

Համաձայն ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվության՝ կաթնամթերքի ոլորտի շուկաներում գործող ընկերությունների գրեթե 50 տոկոսի կարծիքով նշված շուկաներում գործունեություն իրականացնելու (նոր ընկերություններ հիմնելու) համար անհրաժեշտ են 300 և ավելի միլիոն դրամ կապիտալ ներդրումներ, և ընկերությունների 80 տոկոսի կարծիքով կատարված ներդրումների հետգնման ժամկետը կազմում է վեց և ավելի տարի: Վերոնշյալ գործոնների համադրման պայմաններում մեծանում է ընկերությունների կողմից կատարվող ներդրումների ռիսկայնությունը, ինչն իր հերթին ներդրումներ կատարելու տեսանկյունից դարձնում է ոչ գրավիչ:

- **Շուկաների հագեցվածություն**

Համաձայն ներկայացված տեղեկատվության վերլուծության արդյունքների՝ դիտարկվող ապրանքային շուկաները հագեցած են, ինչի մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ ընկերություններն իրենց արտադրական հզորություններն օգտագործում են մասնակիորեն: Մասնավորապես, ընկերությունների կեսից ավելին արտադրական հզորություններն օգտագործում է միայն մեկ քառորդ մասի չափով: Հարկ է նշել նաև, որ 2011-2013 թվականների և 2014 թվականի I կիսամյակի ընթացքում կաթնամթերքի և պանրի իրացման ծավալների էական աճ տեղի չի ունեցել:

Կաթնամթերքի և պանրի շրջանառության բնագավառներում առկա մրցակցային իրավիճակի ձևավորման պատճառների ավելի համապարփակ ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովի կողմից ամրագրվել են ընկերությունների կողմից շուկաների վրա ազդելու առավել կարևոր հետևյալ հանգամանքները.

- **Մատակարարման (տրանսպորտային միջոցներ) և սառնարանային սեփական ցանցի առկայություն**

Համաձայն ներկայացված տեղեկատվության ուսումնասիրության՝ կաթնամթերքի ոլորտի շուկաներում խոշոր ընկերություններն ավելի լայն հնարավորություններ ունեն իրացման առավել մեծ ծավալների ապահովման տեսանկյունից: Մասնավորապես, նման հնարավորությունները մեծապես պայմանավորված են այն հանգամանքով, որ դիտարկվող ընկերությունների շրջանում առաջատար երեք ընկերությունները միասին տիրապետում են ընդհանուր մատակարարման ցանցի՝ տրանսպորտային միջոցների, մոտ 61 տոկոսին և սառնարանային ցանցի ավելի քան 95 տոկոսին: Ուստի կարող ենք փաստել, որ փոքր և միջին ընկերությունների կողմից սեփական մատակարարման և սառնարանային ցանց չունենալու հանգամանքներն էական ազդեցություն են ունենում մանրածախ առևտրի օբյեկտներում վերջիններիս ներկայացվածության, հետևապես նաև իրացման ծավալների պահպանման և ավելացման վրա: Անհրաժեշտ է նշել, որ կատարված ուսումնասիրությունների համաձայն որևէ կերպ սահմանափակված չէ փոքր և միջին ընկերությունների կողմից մեքենաների կամ սառնարանների ձեռքբերումը, և այն հիմնականում կախված է ֆինանսական միջոցների առկայության հանգամանքից: Ինչ վերաբերում է պանրի շուկայում գործող ընկերություններին, ապա կատարված ուսումնասիրության արդյունքում կարող ենք փաստել, որ սեփական սառնարանային ցանցի առկայությունը չունի նույն նշանակությունը, ինչն առկա է կաթնամթերքի իրացման դեպքում: Այսինքն, մանրածախ առևտրի օբյեկտների միջոցով պանրի իրացումը հնարավոր է արդյունավետ կերպով կազմակերպել առանց բրենդային սառնարանների առկայության: Ավելին՝ միաժամանակ պանիր և կաթնամթերք արտադրող և իրացնող ընկերությունների կողմից շուկա մատակարարվող պանիրը մանրածախ առևտրի օբյեկտներում իրացվում է ոչ բրենդային սառնարաններից: Այս դեպքում սեփական սառնարանների առկայությունը որոշիչ ազդեցություն չի թողնում ընկերությունների՝ շուկայում ունեցած դիրքի վրա:

- **շուկաներում գործող ընկերությունների կողմից իրականացվող գնային և մարքեթինգային քաղաքականություն**

Համաձայն ներկայացված տեղեկատվության ուսումնասիրության՝ կաթնամթերքի և պանրի իրացման ծավալի վրա առավել նշանակալից ազդեցություն են ունենում այնպիսի գործոններ, ինչպիսիք են ապրանքի իրացման գինը, բրենդի ճանաչվածությունը և ապրանքի որակը: Հարկ է նշել, որ ապրանքի իրացման գինը չի հանդիսանում այն միակ գործոնը, որը պայմանավորում է սպառողների կողմից այս կամ այն կաթնամթերքի և պանրի ձեռքբերումը: Մասնավորապես, բացի գնային բաղադրիչից ապրանքի իրացման ծավալի վրա ազդող ոչ պակաս կարևոր գործոն է հանդիսանում նաև բրենդի ճանաչվածությունը: Վերջինս ենթադրում է նաև մեծ չափի ֆինանսական միջոցների հատկացում, սակայն կաթնամթերքի ոլորտի շուկաներում գործող ընկերությունների միայն կեսն է միջոցներ տրամադրում մարքեթինգային միջոցառումների իրականացման համար, և այս առումով հատկանշական է այն փաստը, որ առաջատար ընկերությունները, ունենալով լավ ճանաչված բրենդներ,

այնուամենայնիվ շարունակում են միջոցներ հատկացնել այդ ուղղությամբ: Ընդ որում՝ դիտարկված ընկերությունների շրջանում մարքեթինգային միջոցառումների իրականացման համար տրամադրվող ընդհանուր միջոցների ավելի քան 70 տոկոսը բաժին է ընկնում ոլորտի առաջատար երկու խոշոր ընկերություններին: Ինչ վերաբերում է պանրի շուկայում գործող ընկերություններին, ապա անհրաժեշտ է ընդգծել, որ ընկերությունների միայն 38 տոկոսն է իրականացնում մարքեթինգային միջոցառումներ, ընդ որում՝ իրականացվող մարքեթինգային ծախսերը հիմնականում առնչվում են ոչ թե պանրին, այլ տնտեսվարող սուբյեկտների կողմից իրացվող կաթնամթերքի տարբեր տեսակներին:

- **Ապրանքների իրացման տարածքային ընդգրկվածություն**

Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության ուսումնասիրության համաձայն կաթնամթերքի ոլորտի և պանրի շուկաներում դիտարկվող ընկերությունների շուրջ 80 տոկոսն իրացման իմաստով ընդգրկված չէ հանրապետության ամբողջ տարածքում, այլ գործունեություն է իրականացնում միայն կոնկրետ մարզերում և քաղաքներում: Տվյալ հանգամանքը կարևորվում է նրանով, որ այլ հավասար պայմաններում նվազում է տվյալ ընկերությունների կողմից շուկաների վրա մեծ ազդեցություն ունենալու հնարավորությունը:

Շշալցված հանքային ջրերի շուկայի ուսումնասիրություն

Համաձայն կատարված վերլուծության արդյունքների՝ 2011-2013 թվականները և 2014 թվականի I կիսամյակն ընդգրկող ժամանակահատվածում հանքային ջրերի շուկայում արտադրության և իրացման ցուցանիշներով առաջատար ընկերություններ են հանդիսացել «Ջերմուկ Գրուպ», «ՌՌՌ հանքային ջրերի գործարան» և «Ջերմուկ Մայր Գործարան» ընկերությունները, որոնց համատեղ բաժինը դիտարկված ընկերությունների արտադրության կառուցվածքում 2014 թվականի I կիսամյակի ընթացքում կազմել է 90 տոկոս, իսկ իրացման կառուցվածքում՝ 89 տոկոս:

Ուսումնասիրության արդյունքներով շշալցված հանքային ջրերի շուկայում բացահայտվել են գործունեության իրականացման համար խոչընդոտ հանդիսացող հետևյալ գործոնները.

- **Արտադրության ընդլայնմանը խոչընդոտող գործոններ**

Ընկերությունների կողմից որպես արտադրությանը խոչընդոտող առաջնային գործոններ առանձնացվել են ֆինանսական միջոցների բացակայությունը, ընթացակարգային խոչընդոտները, համապատասխան մասնագիտական կրթություն ունեցող աշխատուժի բացակայությունը, ազատ (որևէ ընկերության չպատկանող) հանքերի (հորատանցքերի) բացակայությունը և արտարժութային տատանումների անկանխատեսելիությունը: Հարկ է նկատել, որ ընկերությունների կողմից մրցակցային միջավայրին առնչվող խնդիրներ չեն մատնանշվել: Առանձնակի կարևորվում է ֆինանսական միջոցների հասանելիության խնդիրը, և այս առումով կարևոր հանգամանք է հանդիսանում ֆինանսական կազմակերպությունների կողմից ընկերություններին ֆինանսական միջոցների տրամադրման պայմանները: Մասնավորապես նշենք, որ ընկերությունները պատրաստակամություն են հայտնում կատարել նոր ներդրումներ վերոնշյալ տոկոսադրույքի մակարդակի իջեցման (ակնկալվող տոկոսադրույք է նշվում 3-10 տոկոսը) պարագայում:

- **Ոլորտում գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ մեծ ծավալի ֆինանսական միջոցներ և կատարված ներդրումների հետգնման համար**

պահանջվող համեմատաբար երկար ժամանակահատված

Համաձայն ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվության ուսումնասիրության՝ գրեթե կեսի կարծիքով հանքային ջրերի ոլորտում գործունեություն իրականացնելու (նոր ընկերություններ հիմնելու) համար անհրաժեշտ են 300 միլիոն դրամ և ավելի կապիտալ ներդրումներ, և ընկերությունների 70 տոկոսի կարծիքով կատարված ներդրումների հետգնման ժամկետը կազմում է վեց և ավելի տարի: Վերոնշյալ գործոնների համադրման պայմաններում մեծանում է ընկերությունների կողմից կատարվող ներդրումների ռիսկայնությունը, ինչն իր հերթին ներդրումներ կատարելու տեսանկյունից շուկան դարձնում է ոչ գրավիչ:

- **Շուկայի հագեցվածություն**

Համաձայն ներկայացված տեղեկատվության վերլուծության արդյունքների՝ դիտարկվող ապրանքային շուկան հագեցած է, ինչի մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ ընկերություններն ամբողջությամբ չեն օգտագործում իրենց արտադրական հզորությունները: Մասնավորապես ընկերությունների շուրջ 75 տոկոսն արտադրական հզորություններն օգտագործում է միայն մեկ քառորդի չափով: Հարկ է նշել, որ 2011-2013 թվականների և 2014 թվականի I կիսամյակն ընդգրկող ժամանակահատվածում շշալցված հանքային ջրերի իրացման ծավալների էական աճ տեղի է ունեցել միայն 2013 թվականին, հատկապես երկրորդ կիսամյակի ընթացքում, ինչը կարող է պայմանավորված լինել շուկայում դրոշմապիտակներով պարտադիր դրոշմավորման պահանջի կիրառմամբ:

Շշալցված հանքային ջրերի շուկայում առկա մրցակցային իրավիճակի ձևավորման պատճառների ավելի համապարփակ ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովի կողմից ամրագրվել են ընկերությունների կողմից շուկայի վրա միակողմանիորեն ազդելու առավել կարևոր հետևյալ հանգամանքները.

- **Մատակարարման (տրանսպորտային միջոցներ) և սառնարանային սեփական ցանցի առկայություն**

Համաձայն ներկայացված տեղեկատվության ուսումնասիրության՝ խոշոր ընկերություններն ավելի լայն հնարավորություններ ունեն հանքային ջրերի իրացման առավել մեծ ծավալների ապահովման տեսանկյունից: Մասնավորապես նման հնարավորությունները մեծապես պայմանավորված են այն հանգամանքով, որ դիտարկվող ընկերությունների շրջանում առաջատար երեք ընկերությունները միասին տիրապետում են այս շուկայում ընդհանուր մատակարարման ցանցի՝ տրանսպորտային միջոցների, մոտ 70 տոկոսին և սառնարանային ցանցի ավելի քան 95 տոկոսին: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ փոքր և միջին ընկերությունների կողմից սեփական մատակարարման և սառնարանային ցանց չունենալու հանգամանքներն էական ազդեցություն են ունենում մանրածախ առևտրի օբյեկտներում վերջիններիս ներկայացվածության, հետևապես նաև իրացման ծավալների պահպանման և ավելացման վրա: Միաժամանակ նշենք, որ կատարված ուսումնասիրությունների համաձայն փոքր և միջին ընկերությունների կողմից մեքենաների կամ սառնարանների ձեռքբերումը որևէ կերպ սահմանափակված չէ, և այն հիմնականում կախված է մեծ ծավալի ֆինանսական միջոցների առկայության հանգամանքից:

- **Ոլորտում գործող ընկերությունների կողմից իրականացվող գնային և մարքեթինգային քաղաքականություն**

Համաձայն ներկայացված տեղեկատվության ուսումնասիրության՝ շշալցված հանքային ջրերի իրացման ծավալի վրա առավել նշանակալից ազդեցություն են

ունենում ապրանքի իրացման գինը, բրենդի ճանաչվածությունը և ապրանքի որակը: Բացի գնային բաղադրիչից ապրանքի իրացման ծավալի վրա ազդող կարևոր գործոն է հանդիսանում նաև բրենդի ճանաչվածությունը: Վերջինս ենթադրում է նաև մեծ չափի ֆինանսական միջոցների հատկացում, սակայն ընկերությունների միայն կեսն է միջոցներ տրամադրում մարքեթինգային միջոցառումների իրականացման համար, և այս առումով հատկանշական է այն փաստը, որ շուկայի առաջատար ընկերությունները, ունենալով ճանաչված բրենդներ, այնուամենայնիվ շարունակում են միջոցներ հատկացնել այդ ուղղությամբ: Ընդ որում՝ դիտարկված ընկերությունների շրջանում մարքեթինգային միջոցառումների իրականացման համար տրամադրվող ընդհանուր միջոցների ավելի քան 90 տոկոսը բաժին է ընկնում ոլորտի առաջատար երկու խոշոր ընկերություններին:

- **Ապրանքների իրացման տարածքային ընդգրկվածություն**

Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության համաձայն դիտարկվող ընկերությունների գրեթե կեսն իրացման իմաստով ընդգրկված չէ հանրապետության ամբողջ տարածքում, այլ գործունեություն է իրականացնում միայն կոնկրետ մարզերում և քաղաքներում, որի պատճառով այլ հավասար պայմաններում նվազեցնում է տվյալ ընկերությունների կողմից շուկայի վրա մեծ ազդեցություն ունենալու հնարավորությունը:

Ելնելով վերոգրյալից՝ ամրագրենք, որ կաթնամթերքի ոլորտի, պանրի և շշալցված հանքային ջրերի շուկաներում առկա է էական մրցակցություն, չնայած այն հանգամանքին, որ տվյալ շուկաներում կան նաև արտադրության, ներմուծման և իրացման խոշոր ծավալներ ունեցող ընկերություններ: Միաժամանակ արձանագրվել է, որ կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում կաթնամթերքի ոլորտի և շշալցված հանքային ջրերի նկատմամբ ներկայումս կիրառվում է պարտադիր դրոշմավորման պահանջ, որը նպաստում է միմյանց մրցակից ընկերությունների համար հավասար պայմանների ապահովմանը: Ապրանքային շուկաների մուտքի խոչընդոտների բացահայտման տեսանկյունից նշենք, որ գործող հարկային օրենսդրության համաձայն գյուղացիական տնտեսություններից կաթի մթերումը ենթակա չէ ավելացված արժեքի հարկով հարկման և փոքր ընկերությունները հիմնականում գործում են շրջանառության հարկի համակարգում, ուստի այս առումով նշված շուկաներում նորաստեղծ փոքր և միջին ընկերություններն ունեն մրցակցային առավելություններ:

Ուսումնասիրությունների արդյունքում կաթնամթերքի ոլորտի և շշալցված հանքային ջրերի շուկաներում վերհանվել են խոշոր ընկերությունների առկայությունը հիմնավորող հիմնական գործոնները (շուկայի հագեցվածությունը, գործունեություն իրականացնելու համար մեծ ծավալի ֆինանսական միջոցների անհրաժեշտությունը և կատարված ներդրումների հետգնման համար պահանջվող համեմատաբար երկար ժամանակահատվածը, մատակարարման և սառնարանային սեփական ցանցի առկայությունը), որոնք, ըստ էության, ներհատուկ են հենց շուկայական տնտեսվարմանը և դրանցում մրցակցային օրենսդրությամբ սահմանված խախտումներ առկա չեն:

- Հանձնաժողովի կողմից շշալցված հանքային ջրերի շուկան ուսումնասիրվել է նաև դրանում խոշոր ընկերությունների կողմից մրցակցային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ իրականացվող հսկողության տեսանկյունից: Մասնավորապես, Հանձնաժողովի կողմից իրականացված դիտանցումների, ինչպես նաև մամուլում տեղ գտած հրապարակումների համաձայն՝ շշալցված հանքային ջրերի

շուկայում բարձրացվել են հանքային ջրերի իրացման գները:

Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության ուսումնասիրության համաձայն՝ գնային բարձրացումներ իրականացրած ընկերությունների կողմից կատարված բարձրացումները պայմանավորված են եղել ինքնարժեքը ձևավորող մի շարք բաղադրիչների ձեռքբերման գների բարձրացմամբ: Մասնավորապես էական ազդեցություն են ունեցել պոլիէթիլենային տարաների, ապակյա շշերի, խցանների, ստվարաթղթե տակդիրների ձեռքբերման գների փոփոխությունները: Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության վերլուծության արդյունքում պարզվել է նաև, որ «Ջերմուկ մայր գործարան» ընկերության պարագայում ինքնարժեքը ձևավորող գործոններից բացի գների բարձրացման վրա ազդել են նաև իրացման և վարչական ծախսերի փոփոխությունները: Ուսումնասիրության արդյունքում մրցակցության օրենսդրության խախտման փաստ չի հայտնաբերվել:

- Հանձնաժողովը 2014 թվականի ընթացքում իրականացրել է նաև մի շարք այլ ապրանքային շուկաների ուսումնասիրություններ: Մասնավորապես, 2014 թվականի ընթացքում շարունակվել են վերահսկողության ուղղությամբ աշխատանքները կենտրոնացվածության բարձր աստիճան, սոցիալական կարևոր նշանակություն ունեցող ապրանքային շուկաներում՝ նպատակ ունենալով դրանցում ապահովել հավասար մրցակցային պայմաններ, նպաստել տնտեսվարող սուբյեկտների իրավունքների ու սպառողների շահերի պաշտպանությանը: Մասնավորապես, հաշվի առնելով 2014 թվականի նոյեմբեր ամսվա վերջին տասնօրյակի և դեկտեմբեր ամսվա ընթացքում արտարժույթի շուկայում արձանագրված գործընթացները, և որպես դրանց հետևանք՝ բարձր կենտրոնացվածություն ունեցող մի շարք շուկաներում սոցիալական կարևոր նշանակության և լայն սպառման ապրանքների գների աճը, Հանձաժողովի կողմից սահմանված կարգով ամենօրյա դիտանցումներ են իրականացվել մի շարք խոշոր առևտրի կետերում՝ հնարավոր հակամրցակցային դրսևորումների բացահայտման, կանխարգելման, ինչպես նաև տնտեսվարող սուբյեկտների վարքագծին հետևելու և Օրենքի խախտման ռիսկերի առկայության պարագայում դրանց գործուն կերպով արձագանքելու նպատակով: Ընդհանուր առմամբ, 2014 թվականի նոյեմբեր ամսվա վերջին տասնօրյակի և դեկտեմբեր ամսվա ընթացքում ուսումնասիրվել է թվով 7 ապրանքային շուկաներում (ալյուր, շաքարավազ, բենզին, ավտոմեքենաների լիցքավորման հեղուկ գազ, կաթնամթերք, ձու, դեղեր) գործող թվով 15 ընկերությունների իրականացրած գործունեությունը և դրսևորած գնային քաղաքականությունը: Ուսումնասիրության շրջանակներում դիտարկվել են ընկերությունների ակտիվները, պարտավորությունները, դեբիտորական և կրեդիտորական պարտքերը, ինչպես նաև փոխարժեքի տատանման ազդեցությունը վերջիններիս վրա: Իրականացված ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ ընկերությունների կողմից ապրանքների գների չհիմնավորված բարձրացումներ չեն արձանագրվել: Ապրանքային շուկաներում արձանագրված զարգացումներն իրենց մեջ մրցակցության խնդիր չեն պարունակել, քանի որ գնային բարձրացումները հիմնականում պայմանավորվել են ԱՄՆ դոլարի փոխարժեքի աճով: Միաժամանակ, դրամի փոխարժեքի կայունացմանը զուգահեռ արձանագրվել է ապրանքների գների նվազում:

Պետական գնումների ոլորտի ուսումնասիրություն

Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը և այս ոլորտում Հանձնաժողովի

կողմից նախկինում իրականացված ուսումնասիրությունների արդյունքները՝ հակամրցակցային համաձայնությունների առումով առավել ռիսկային է համարվում պետական գնումների ոլորտը՝ տնտեսվարող սուբյեկտների միջև մրցույթների կամ աճուրդների պայմանների, դրանց արդյունքների վերաբերյալ պայմանավորվածությունների ձեռքբերման տեսանկյունից: Հաշվետու ժամանակահատվածում ոլորտում իրականացվել են մի շարք աշխատանքներ.

- **Տպագրական աշխատանքների մրցույթներ**

- Գնումների գործընթացում արձանագրված խնդիրների վերաբերյալ Հանձնաժողով ստացվել են բողոքներ, որոնց հիման վրա ուսումնասիրություն է իրականացվել մի շարք պետական հաստատությունների կողմից պետական գնումների շրջանակներում տպագրական աշխատանքների կատարման նպատակով հայտարարված գնման ընթացակարգերի առնչությամբ: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ «Բերդի ԲԿ» ընկերության կողմից մերժվել է մասնակիցներից մեկի հայտը՝ պատճառաբանելով ՀՀ կառավարության որոշման պահանջները: Մինչդեռ, 2011 թվականից նշյալ որոշումն այլևս չի գործում: «Բերդի ԲԿ» ընկերության կողմից Հանձնաժողով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է նաև, որ վերոնշյալ գնման ընթացակարգում հաղթող ճանաչված ընկերության հետ կնքված պայմանագրով հստակ սահմանված չեն նախատեսված աշխատանքների իրականացման ժամկետները, ինչը դրանց իրականացման նկատմամբ լիարժեք վերահսկողության առումով կարող է որոշակի ռիսկեր առաջացնել:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերը նշված խնդիրներն իրենց մեջ կարող էին պարունակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի խախտման ռիսկեր, Հանձնաժողովը գնումների ոլորտի լիազոր մարմին է ներկայացրել իրականացված ուսումնասիրությունների արդյունքները՝ արձանագրված խնդիրներին ընթացք տալու նպատակով:

- Ուսումնասիրվել է «Նորավանքի» ԳԿՀ կողմից կազմակերպված գնման ընթացակարգը, որի արդյունքում պարզվել է, որ մրցույթում հաղթող ճանաչված ընկերության կողմից տպագրվել են ոչ թե 180 էջ ունեցող ամսագրեր (ինչպես նախատեսված է եղել մրցույթի պահանջներով), այլ շատ ավելի քիչ էջեր ունեցող ամսագրեր: Բացի այդ, ամսագրերը չեն տպագրվել մրցույթի պահանջներով նախատեսված խտությամբ թղթի վրա: Հարկ է նշել նաև, որ «Նորավանք» ԳԿՀ–ն Հանձնաժողովին ուղղված գրությամբ համաձայնվել է Հանձնաժողովի այն հատկորոշման հետ, որ մրցույթի տեխնիկական պահանջների փոփոխության դեպքում պետք է կազմակերպել նոր մրցույթ և պարտավորվել է հայտարարել նոր մրցույթ ու պահպանել տեխնիկական պահանջների անփոփոխության սկզբունքը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ուսումնասիրության արդյունքում մրցակցային օրենսդրության խախտումներ չեն հայտնաբերվել և վերը նշված խնդիրներն իրենց մեջ կարող էին պարունակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի խախտման ռիսկեր, Հանձնաժողովը գնումների ոլորտի լիազոր մարմին է ներկայացրել իրականացված ուսումնասիրությունների արդյունքները:

- **Պահնորդական ծառայությունների մատուցման մրցույթներ**

Պահնորդական ծառայություններ մատուցող «Լեգիոն Ե.Ս.Է.» ընկերության և Պահնորդական միության բողոքի հիման վրա հարուցվել է վարչական վարույթ և ուսումնասիրվել են պետական գնումների ոլորտում պահնորդական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվող գնման ընթացակարգերը:

Ուսումնասիրության շրջանակներում հայտնաբերվել է, որ պահնորդական ծառայություն մատուցող որոշ ընկերություններ փաստացի ավելի քիչ գրանցված աշխատող ունեն, քան անհրաժեշտ է կնքված պայմանագրերի ամբողջական պայմանների կատարման համար կամ աշխատավարձերը ցածր են եղել նույնիսկ ՀՀ օրենսդրությամբ սահմանված նվազագույն աշխատավարձից: Այդ հանգամանքը հնարավորություն է տվել ընկերություններին մրցույթների ժամանակ առաջարկել անհրատեսական ցածր գներ և ստանալ բարեխիղճ ընկերություններին մրցույթից դուրս թողնելու հնարավորություն:

Հաշվի առնելով, որ ուսումնասիրության ընթացքում մրցակցության օրենսդրության խախտման փաստ չի հայտնաբերվել, գործում առկա նյութերն ուղարկվել է ՀՀ ֆինանսների նախարարություն և Ոստիկանություն:

Բենզինի շուկայի ուսումնասիրություն

2014 թվականի հոկտեմբերին ՋԼՄ-ների բազմաթիվ հրապարակումներում նշվել են, որ համաշխարհային բորսաներում նավթի գները նվազում են, իսկ ՀՀ-ում բենզինի իրացման գները չեն նվազում: Հանձնաժողովը հետամուտ է եղել ուսումնասիրելու տվյալ խնդիրը և պարզելու նավթամթերքի շուկայում տիրող իրավիճակը:

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ 2014 թվականի հունվարից մինչև 2015 թվականի հունվար ամիսը բենզինի ձեռքբերման գները ԱՄՆ դոլարով արտահայտված նվազել են 38 տոկոսով, սակայն այդ նույն ժամանակահատվածում ՀՀ դրամն արժեզրկվել է մոտ 17 տոկոսով: Նույն ժամանակահատվածում բենզինի՝ ԱՄՆ դոլարով արտահայտված իրացման գները նվազել են 25 տոկոսով: Հանձնաժողովի կողմից նաև ուսումնասիրվել են նշված ժամանակաշրջանում եվրոպական երկրներում և ԱՄՆ-ում մանրածախ իրացվող բենզինի դոլարով արտահայտված գների փոփոխությունները: Արդյունքում պարզվել է, որ նույն ժամանակաշրջանում եվրոպական երկրներում բենզինի գները նվազել են 25-29 տոկոսով, որին ընդհանուր առմամբ համահունչ է ՀՀ-ում բենզինի գների 25 տոկոսով նվազելը: Բացառություն է կազմում միայն ԱՄՆ, որտեղ բենզինի գները նվազել են շուրջ 32 տոկոսով, ինչն էլ պայմանավորված է նրանով, որ ԱՄՆ-ում նավթի արժեքը վաճառվող բենզինի գնի մեջ եվրոպական երկրների համեմատ բարձր է և կազմում է մինչև 60 տոկոս:

Հանձնաժողովը նաև ուսումնասիրել է նավթի գների փոփոխության ազդեցությունը ՀՀ-ում բենզինի վաճառքի գների վրա և պարզել, որ բենզինի ձեռքբերման գինը մանրածախ գնի մեջ կազմում է մինչև 45 տոկոս: Բացի այդ, մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմում նաև հարկերը և տեղափոխման ծախսերը: Ընդ որում՝ բենզինի գնի մեջ նավթի արժեքը կազմում է 5-10 տոկոս:

Ուսումնասիրության արդյունքում մրցակցության օրենսդրության խախտումներ չեն հայտնաբերվել:

«Ծխախոտ ֆիլտրով» և «Ծխախոտ առանց ֆիլտրի» շուկաների ուսումնասիրություն

Հանձնաժողովի կողմից իրականացված դիտանցումների, ինչպես նաև մամուլում տեղ գտած հրապարակումների համաձայն՝ 2014 թվականի հունվար ամսվա ընթացքում ծխախոտի շրջանառության բնագավառում գործունեություն իրականացնող «Գրանդ Տոբակո» ընկերության կողմից բարձրացվել են ծխախոտի իրացման գները:

Կատարված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ գնային բարձրացումները պայմանավորված են եղել հարկային օրենսդրության փոփոխությամբ, ինչպես նաև ընկերությունների կողմից գազի ու էլեկտրաէներգիայի սպառման գծով լրացուցիչ ծախսերի կատարմամբ և ամորտիզացիոն ծախսերի ավելացմամբ:

«Մինչև հինգ տարի հնեցմամբ հայկական արտադրության կոնյակներ» և «Հինգ տարուց ավելի հնեցմամբ հայկական արտադրության կոնյակներ» շուկաների ուսումնասիրություն

Հանձնաժողովի կողմից իրականացված դիտանցումների, ինչպես նաև մամուլում տեղ գտած հրապարակումների համաձայն՝ կոնյակի շրջանառության ոլորտում գործունեություն իրականացնող ընկերությունների կողմից կատարվել են գնային բարձրացումներ: Հանձնաժողովն ուսումնասիրություն է իրականացրել գերիշխող դիրք զբաղեցնող «Երևանի կոնյակի գործարան» և «Պռոշյանի կոնյակի գործարան» ընկերությունների կողմից կատարված գնային բարձրացումների հիմնավորվածությունը պարզելու նպատակով:

Իրականացված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ «Պռոշյանի կոնյակի գործարան» ընկերության կողմից գնային փոփոխությունները պայմանավորված են եղել «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքի փոփոխություններով, ինչի արդյունքում ավելացել է ընկերության կողմից ՀՀ պետական բյուջե վճարվող ակցիզային հարկի գումարը: «Երևանի կոնյակի գործարան» ընկերության կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության ուսումնասիրության համաձայն՝ ընկերության իրականացրած գնային բարձրացումները պայմանավորված են եղել ինչպես «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններով, այնպես էլ ընկերության մի շարք անուղղակի ծախսերի ավելացմամբ:

Գարեջրի շուկայի ուսումնասիրություն

Հանձնաժողովի կողմից իրականացված դիտանցումների, ինչպես նաև մամուլում հայտնված հրապարակումների համաձայն՝ «Երևանի Գարեջուր», «Գյումրի Գարեջուր» և ««Կոտայք» Գարեջրի Գործարան» ընկերությունները բարձրացրել են իրացվող գարեջրի գինը:

Ուսումնասիրությունից պարզվել է, որ ընկերությունների արտադրական ինքնարժեքում հիմնականում փոփոխվել են ածիկի և բրնձի գները, ամորտիզացիոն ծախսերը, աշխատավարձի ֆոնդը, իրացման ծախսերը:

Ուսումնասիրության արդյունքում մրցակցության օրենսդրության խախտման փաստ չի հայտնաբերվել:

Արտաքին գովազդային վահանակների ոլորտի ուսումնասիրություն

«Հարկ վճարողների և գործարարների իրավունքների պաշտպանություն» հասարակական կազմակերպությունը դիմել է Հանձնաժողով հայտնելով՝ որ գովազդային վահանակների սեփականատերերի և խոշոր գովազդային ընկերությունների միջև հնարավոր է գոյություն ունենան հակամրցակցային

համաձայնություններ: Դիմումում նշվում է, որ գովազդային վահանակներ ունեն շատ քիչ սեփականատերեր, որոնք էլ օգտվելով այդ փաստից, վահանակների վրա գովազդ տեղադրելու համար սահմանում են բավականին բարձր գներ, որի արդյունքում սահմանափակվում է նոր գովազդային ընկերությունների մուտքը այս ոլորտ:

Հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ շուկայում կազմակերպությունների կողմից կիրառվում են տարբեր գներ և հակամրցակցային համաձայնության փաստեր չեն արձանագրվել: Այնուամենայնիվ, որոշ ընկերություններ չեն պահպանել Երևան քաղաքի ավագանու կողմից սահմանված՝ կենտրոն վարչական շրջանում տեղադրվող գովազդային վահանակների առավելագույն չափերը: Արդյունքում տվյալ ընկերությունները կարող են ստանալ մրցակցային առավելություններ այն ընկերությունների նկատմամբ, որոնք պահպանում են սահմանված չափերը: Նշված խնդիրը դուրս է գտնվել Հանձնաժողովի լիազորությունների շրջանակներից, ուստի ուսումնասիրության արդյունքները տրամադրվել են Երևանի քաղաքապետարան:

Շինարարական որոշ ապրանքների գնագոյացման ուսումնասիրություն

Հանձնաժողովը «Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ԳՎԻԿ) գրության հիման վրա ուսումնասիրություն է իրականացրել «Կամրջային երկաթբետոնե կոնստրուկցիաների գործարան» ընկերության կողմից երկաթբետոնե կոնստրուկցիաների շրջանառության ոլորտում իրականացրած գործունեության վերաբերյալ: Ներկայացված գրության համաձայն ընկերությունը հանդիսացել է մի շարք երկաթբետոնե կոնստրուկցիաների միակ արտադրողը և նրա կողմից տրամադրված գները հիմք են հանդիսացել ԳՎԻԿ-ի կողմից յուրաքանչյուր ամիս հրատարակվող «Ինֆորմացիոն տեղեկագրերում» ՀՀ պետական կարիքների համար շինարարական ապրանքների ու կոնստրուկցիաների կողմնորոշիչ գները սահմանելիս: Հարկ է նշել, որ այդ կողմնորոշիչ գներն էլ իրենց հերթին հիմք են հանդիսանում պետական կարիքների համար իրականացվող շինարարական ապրանքների և աշխատանքների նախահաշվային արժեքները որոշելիս: Միաժամանակ նշվել է, որ Ընկերության կողմից տրամադրվող մի շարք ապրանքատեսակների կողմնորոշիչ գներ 2014 թվականի տարեսկզբին 2013 թվականի տարեվերջի նկատմամբ զգալիորեն աճել են: Հանձնաժողովի կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ դիտարկվող ժամանակահատվածում ընկերության կողմից վերը նշված երկաթբետոնե կոնստրուկցիաների արտադրություն և իրացում չի իրականացվել: Միևնույն ժամանակ այդ ապրանքների ինքնարժեքը ձևավորող ծախսային բաղադրիչների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ 2013 թվականի դեկտեմբեր ամսից մինչև 2014 թվականի ապրիլ ամիսն ընկած ժամանակահատվածում դրանց ձեռքբերման գներում նույնպես էական փոփոխություններ չեն արձանագրվել:

Ուսումնասիրության արդյունքում Օրենքի խախտումներ չեն հայտնաբերել, իսկ ուսումնասիրության արդյունքները տրամադրվել են ԳՎԻԿ-ին:

Գլուխ 3. Տնտեսական մրցակցության կարգավորման և վերահսկման ուղղությամբ իրականացված միջոցառումներ

Հայաստանի Հանրապետությունում ազատ տնտեսական մրցակցությունը պաշտպանելու և խրախուսելու, ձեռնարկատիրության զարգացմանը և սպառողների շահերի պաշտպանությանը նպաստելու տեսանկյունից առավել քան կարևոր է գերիշխող դիրքի չարաշահումների և հակամրցակցային համաձայնությունների բացահայտման, կանխման, ինչպես նաև՝ վերոնշյալ դրսևորումների դեմ արդյունավետ և հետևողական պայքարելու ուղղությամբ համապատասխան աշխատանքների իրականացումը:

Ապրանքային շուկաների մրցակցային իրավիճակի վրա իր դրական ազդեցությունն են ունեցել իրականացված ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա Հանձնաժողովի կողմից մրցակցության կարգավորման և վերահսկման ուղղությամբ իրականացված միջոցառումները, որոնք նպաստել են ազատ մրցակցային միջավայրի ձևավորմանը: Հաշվետու ժամանակահատվածում նշված ուղղությամբ իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Հանձնաժողովն ամփոփել է համակարգչային գլոբալ ցանցի «.am» տիրույթում հանգուցային անվանումների գրանցման, սպասարկման, համակարգման և կառավարման ծառայությունների մատուցման ոլորտում առկա հակամրցակցային գործողությունների և մատուցվող ծառայությունների բարձր գների կապակցությամբ հարուցված վարչական վարույթը: Իրականացված վարչական վարույթի արդյունքում Հանձնաժողովը բացահայտել է, որ «ԻՏԿ» ընկերությունը, որը տվյալ շուկայում ունի մենաշնորհ դիրք, «.am» տիրույթում հանգուցային անվանումների գրանցման նպատակով մի շարք ընկերությունների (Միջնորդ ընկերություններ) հետ կնքել է պայմանագրեր, սակայն, Միջնորդ ընկերությունների հետ կնքել է գովազդային և խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագրեր, այն դեպքում, երբ վարչական վարույթի ընթացքում ձեռքբերված ապացույցներով չի հիմնավորվել տվյալ ծառայության փաստացի առկայությունը: Միաժամանակ պարզ չէր, թե ինչ չափանիշներից ելնելով է այդ ծառայության արժեքը կախման մեջ գտնվում հանգուցային անվանում գրանցելու գործընթացից: Փաստորեն Միջնորդ ընկերություններին անուղղակիորեն պարտադրվել է կնքել հանգուցային անվանումների գրանցման ծառայության մատուցման պայմանագրի առարկայի հետ կապ չունեցող պայմանագրեր, որոցից հրաժարվելու դեպքում Միջնորդ ընկերությունները կհայտնվեին մրցակցային անհավասար պայմաններում և դուրս կմղվեին տվյալ ապրանքային շուկայից: Հանձնաժողովը, «ԻՏԿ» ընկերության կողմից Միջնորդ ընկերություններին լրացուցիչ պայմանների պարտադրումը, որի արդյունքում Միջնորդ ընկերությունները զրկվել են երրորդ անձանց «.am» տիրույթում յուրաքանչյուր հանգուցային անվանում գրանցելու դիմաց ինքնուրույն գին որոշելու հնարավորությունից, հատկորոշել է որպես մենաշնորհ դիրքի չարաշահում և «ԻՏԿ» ընկերության նկատմամբ կիրառել է պատասխանատվության միջոց, ինչպես նաև հանձնարարել հետագայում բացառել օրենքի խախտումը:

- Հանձնաժողովը շարունակել է ուսումնասիրությունները էլեկտրամատակարարման և ջրամատակարարման ծառայություններ մատուցող ընկերությունների գործունեության նկատմամբ: Այսպես, Հանձնաժողովում առկա համապատասխան ուսումնասիրությունների փորձը փաստում է, որ քիչ չեն դեպքերը,

երբ նշված ծառայություններ մատուցող ընկերությունների կողմից («Հայաստանի էլեկտրական ցանցեր» և «Երևան ջուր» ընկերություններ) սպառողներին (քաղաքացիներ և տնտեսվարող սուբյեկտներ) ներկայացվում են վճարման պահանջներ, որոնց վերաբերյալ վերջիններիս անհամաձայնության պարագայում ծառայություններ մատուցող ընկերությունների կողմից դադարեցվում են ծառայությունների մատուցումները և պարտադրում լրացուցիչ պարտավորություններ: Հաշվի առնելով այն, որ սպառողների համար բացակայում է նշված տեսակի ծառայությունների ստացման այլընտրանքային տարբերակը, վերջիններս հաճախ ստիպված են լինում կատարելու անհարկի վճարումներ: Ընդ որում՝ տվյալ դեպքում սպառողներին պարտադրվում է վճարել այն ծառայությունների դիմաց, որոնցից վերջիններս կամ չեն օգտվել, կամ էլ չեն հանդիսանում նշված վճարումներն իրականացնելու համար պատասխանատու անձինք:

Հանձնաժողովի կողմից արդեն իսկ բացահայտված խնդիրներից մեկը վերաբերում է նորակառույց շենքերում էլեկտրամատակարարման համակարգին միացման համար բնակիչ բաժանորդներից լրացուցիչ գումարների վճարման պահանջների ներկայացմանը, որոնք պետք է վճարեն ոչ թե բնակիչները, այլ կառուցապատող ընկերությունները: Հանձնաժողովը էլեկտրամատակարարում իրականացնող ընկերության գործողությունը որակել է որպես մենաշնորհ դիրքի չարաշահում և կիրառել պատասխանատվության միջոց:

Մյուս խնդիրն առնչվում է շենքերում ջրամատակարարման իրականացմանը: Այսպես, «Երևան ջուր» ընկերության կողմից նշված դեպքում բնակիչ բաժանորդներից պահանջվել է վճարել իրենց հետ կնքված պայմանագրերի համաձայն տեղադրված ջրաչափի ցուցմունքներին համապատասխան հաշվարկված ջրի սպառման գումարների փոխարեն կառուցապատող ընկերության հետ կնքված պայմանագրի համաձայն տեղադրված ջրաչափի (շենք մտնող ընդհանուր ջրաչափ) ցուցմունքներին համապատասխան հաշվարկված ջրի սպառման գումարները: Վարույթի ընթացքում «Երևան ջուր» ընկերությունը լուծել է առաջացած խնդիրները, ինչի արդյունքում ներկայացված բողոքը ետ է վերցվել և վարույթը կարճվել է:

- «ՋիԷնՍի-Ալֆա» ընկերությունը դիմել է Հանձնաժողով՝ հայտնելով, որ «ՋիԷնՍի-Ալֆա» ընկերության և «ԱրմենՏել» ընկերության միջև կնքվել է պայմանագիր, որի համաձայն «ԱրմենՏել» ընկերությունը «ՋիԷնՍի-Ալֆա» ընկերությանն է տրամադրել սեփականության իրավունքով իրեն պատկանող հեռահաղորդակցության խողովակների համակարգում համապատասխան թողունակություն՝ օպտիկամանրաթելային մալուխ անցկացնելու նպատակով: Նույն պայմանագրի շրջանակներում «ՋիԷնՍի-Ալֆա» ընկերությունը դիմել է «ԱրմենՏել» ընկերությանը՝ խնդրելով տրամադրել թողունակություն օպտիկական մալուխի անցկացման համար: «ԱրմենՏել» ընկերությունը պայմանագրին կից փորձել է պարտադրել լրացուցիչ ծառայություններ, որոնք «ՋիԷնՍի-Ալֆա» ընկերության կողմից չեն պահանջվել:

Հանձնաժողովը սահմանված կարգով հարուցել է վարչական վարույթ, կազմակերպվել են քննարկումներ: Վարույթի ընթացքում «ԱրմենՏել» ընկերությունը լուծել է առաջացած խնդիրները, ինչի արդյունքում ներկայացված բողոքը ետ է վերցվել և վարույթը կարճվել է:

- Հիմք ընդունելով քաղաքացիների կողմից ներկայացված բողոքները՝ Հանձնաժողովն ուսումնասիրություն է իրականացրել վերելակների սպասարկման ծառայությունների մատուցման բնագավառում: Այսպես, ուսումնասիրության շրջանակներում պարզել է, որ վերելակների սպասարկման ծառայություններ

իրականացնող ընկերության կողմից առկա են սակագնային քաղաքականության չհիմնավորված կիրառման դեպքեր: Մասնավորապես, «Նոր Նորք վերելակ» ընկերությունը, որը գործունեություն է իրականացնում Նոր Նորք վարչական շրջանում, բնակիչներին տեղեկացրել է, որ նախատեսում է իրականացնել մատուցվող ծառայությունների սակագնի փոփոխություններ:

Բնակիչներից ստանալով դիմում՝ Հանձնաժողովը ձեռնամուխ է եղել պարզելու կատարվելիք բարձրացումների հիմնավորվածությունը, քանի որ տվյալ տարածքում ընկերությունը հանդիսացել է վերելակների սպասարկման ծառայություն մատուցող հիմնական ընկերությունը և դրանով պայմանավորված ունեցել է գերիշխող դիրք: Կատարված ուսումնասիրությունների արդյունքում Ընկերությունը պարտավորվել է չկիրառել բնակիչների մի մասի հետ արդեն իսկ կնքված նոր պայմանագրերը՝ դրանցում կատարելով համապատասխան փոփոխություններ: Տվյալ պարագայում Հանձնաժողովի կողմից կիրառվել է պատասխանատվության միջոց՝ հանձնարարելով ընկերությանը հետագայում բացառել Օրենքի խախտումը: Արդյունքում կանխվել է բազմաթիվ բնակիչներին վերաբերող գնի չհիմնավորված բարձրացման գործողությունը:

- Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է «ՀԿԵ» ընկերության գործունեությունը և վերջինիս կողմից երկաթուղային բեռնափոխադրումների ոլորտում կիրառվող գնային քաղաքականության համապատասխանությունը մրցակցային օրենսդրությանը: Դրա համար հիմք են հանդիսացել բազմաթիվ բողոքներ այն մասին, որ 2014 թվականի երկրորդ եռամսյակից թանկացել է երկաթուղային տրանսպորտով նավթամթերքի փոխադրման փոխադրավարձը: Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է վերջինիս բարձրացման հիմնավորվածությունը, ընկերության գործունեության արդյունքում առաջացած ծախսերը և եկամուտները, ինչպես նաև գործունեության արդյունքում ձևավորված վնասի պատճառները: Արդյունքում պարզվել է, որ ընկերության կողմից կատարված գնային բարձրացումները ոչ միշտ են համահունչ եղել ծախսերին: Իրականացված ուսումնասիրության արդյունքում նաև պարզվել է, որ 2013 թվականի վերջի դրությամբ Ընկերությունն ունի 9.3 մլրդ դրամի կուտակված վնաս, որի առաջացման պատճառներից հիմնականը կոնցեսիոն պայմանագրով նախատեսված և կատարված ներդրումների ամորտիզացիան է: Ուսումնասիրության արդյունքում բացահայտվել են մի շարք այլ խնդիրներ, որոնք ներկայացվել են ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն: Մասնավորապես, ընկերությունն օրենսդրությամբ սահմանված կարգով պարտավոր էր համաձայնեցնել և հրապարակել ենթակառուցվածքների վերաբերյալ տեղեկատվությունը, որը ներառում է բազմաթիվ կարևորագույն տվյալներ, ինչպիսիք են ռազմավարական նշանակության ապրանքների երկաթուղային բեռնափոխադրումների առավելագույն սակագները: Մինչդեռ 2010 թվականից ի վեր, երբևէ այդ տեղեկատվությունը չի համաձայնեցվել լիազոր մարմնի (ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն) հետ և չի հրապարակվել: Նաև բացահայտվել է, որ «ՀԿԵ» ընկերության կողմից ապրանքների և ծառայությունների ձեռքբերման համար անցկացվող մրցույթները չեն կարգավորվում «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ինչը թույլ է տալիս ընկերությանն ապրանքները կամ ծառայությունները ձեռք բերել ցանկացած վաճառողից, ցանկացած գնով: Հանձնաժողովը «ՀԿԵ» ընկերությանը տվել է զգուշացում և հանձնարարել հետագայում ձեռնպահ մնալ նմանատիպ վարքագծից:
- Հանձնաժողովն ուսումնասիրություն է իրականացրել «Էյր Արմենիա» ընկերության բողոքի հիման վրա ռուսական ավիաընկերությունների կողմից կիրառվող

սակագների վերաբերյալ: Ընկերությունը նշել է, որ «ՅՈւՏԷյր Արմենիա» ընկերության կողմից Կրասնոդար, Սոչի և Մինվոդի ուղղություններով կիրառվում է ցածր սակագին՝ 38 Եվրոյի չափով, իսկ Դոնի Ռոստովի ուղղությամբ ցածր սակագին՝ 48 Եվրոյի չափով, որն ըստ դիմումատուի՝ ակնհայտորեն բավարար չէ չվերթների կատարման ծախսերը հոգալու համար: Դիմումատուն նաև նշել է, որ փոխադրողների կողմից կտրուկ ավելացվել են կատարվող չվերթների քանակությունները, ինչն ավիացիայի ոլորտում հայտնի է որպես հաճախականությունների և տարողությունների դեմպինգ:

Ներկայացված դիմումի հիման վրա Հանձնաժողովի կողմից կատարվել է ուսումնասիրություն: «ՅՈւՏԷյր Արմենիա» ընկերությունը հայտնել է, որ ՀՀ տարածքում իրականացնում է միայն «ՅՈւՏԷյր» ավիաընկերության չվերթների սպասարկում: Չվերթների սակագները մշակում և փոփոխություններն իրականացնում է «ՅՈւՏԷյր» ավիաընկերությունը և նշված հարցերի վերաբերյալ հիմնավորող փաստարկներ կարող է տրամադրել միմիայն ավիաընկերությունը:

Միջազգային համագործակցության շրջանակներում Հանձնաժողովի տրամադրության ներքո գտնվող նյութերը փոխանցվել են ՌԴ մրցակցային մարմին, հաշվի առնելով, որ «ՅՈւՏԷյր» ավիաընկերությունը հանդիսանում է ՌԴ-ում գրանցված ընկերություն:

- Հանձնաժողովը 2014 թվականի ընթացքում շարունակել է ակտիվ ուսումնասիրությունները համակենտրոնացումների, այդ թվում՝ չհայտարարագրված համակենտրոնացումների բացահայտման ուղղությամբ, որի նպատակն է թույլ չտալ նույն կամ միմյանց հետ փոխկապակցված ոլորտներում գործող տարբեր ընկերությունների՝ միավորումների միջոցով օրենսդրությամբ արգելված խոշորացումը և գերիշխող դիրքի ամրապնդումը: Հանձնաժողովի կողմից 2014 թվականի ընթացքում պատասխանատվության են ենթարկվել թվով 88 տնտեսվարող սուբյեկտներ, որոնք սահմանված կարգով չեն հայտարարագրել համակենտրոնացումները:

Միաժամանակ Հանձնաժողովը շարունակել է տնտեսվարող սուբյեկտների դիմումների հիման վրա համակենտրոնացման դեպքերի ուսումնասիրությունը: Այս առումով նշված ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից կայացվել են համակենտրոնացումների թույլտվության 30, համակենտրոնացման արգելման 1, ինչպես նաև տնտեսվարող սուբյեկտներին անձանց խումբ համարելու 30 որոշումներ:

Մրցակցության, ինչպես նաև սպառողների շահերի պաշտպանության տեսանկյունից կարևոր խնդիրներից է հանդիսանում անբարեխիղճ մրցակցության դրսևորումների բացահայտումը, կանխարգելումը և դադարեցումը:

Այդ նպատակով Հանձնաժողովն իրականացրել է ուսումնասիրություններ, որոնց արդյունքում անբարեխիղճ մրցակցության դրսևորման համար պատասխանատվության են ենթարկել 38 տնտեսվարող սուբյեկտներ, որոնցից 34-ը նախազգուշացվել են, իսկ 4-ի նկատմամբ կիրառվել է տուգանք:

Միաժամանակ Հանձնաժողովը 2014 թվականի ընթացքում հայտնաբերել է զանգվածային լրատվական միջոցներով, ինտերնետային կայքերով, ռադիոյով և հեռուստատեսությամբ, SMS հաղորդագրությունների միջոցով հեռարձակվող անբարեխիղճ գովազդի շուրջ 19 դեպքեր, որոնց ուղղությամբ կատարվել են համապատասխան ուսումնասիրություններ: Ստորև ներկայացված են անբարեխիղճ մրցկացության դրսևորման մի շարք գործեր.

- Հանձնաժողովի կողմից կատարված դիտանցումների արդյունքում արձանագրվել է, որ «Փրիթի Ուեյ» ընկերության վաճառասրահի տարածքի մուտքի մոտ փակցված է գովազդային վահանակ՝ «Պաշտոնական ներկայացուցիչ. «Samsung»

(«Սամսունգ»), «Philips» («Ֆիլիփս»), «Sharp» («Շարփ»), «Mastercook» («Մասթըրքուք»), «Zelmer» («Զելմեր»), «Fagor» («Ֆագոր»)» բովանդակությամբ: Այդ կապակցությամբ իրականացված ուսումնասիրությունների արդյունքում Հանձնաժողովն ամրագրել է, որ ընկերության կողմից ներկայացված «պաշտոնական ներկայացուցիչ» հասկացությունը չի համապատասխանում օրենսդրությամբ սահմանված պահանջներին: Հետևաբար, ընկերության կողմից գովազդում մի շարք տնտեսվարող սուբյեկտների պաշտոնական ներկայացուցիչը հանդիսանալու վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելն այն դեպքում, երբ ընկերությունը օրենսդրությամբ սահմանված կարգով չի հանդիսանում տվյալ տնտեսվարող սուբյեկտների պաշտոնական ներկայացուցիչը, Հանձնաժողովը որակել է որպես հասարակության մոլորեցում՝ անբարեխիղճ մրցակցության գործողություն: Հանձնաժողովն օրենքի խախտման համար «Փրիթի Ուեյ» ընկերության նկատմամբ կիրառել է պատասխանատվության միջոց:

•«Ռեքո Ռեքորդս» ընկերությունը Հանձնաժողով է ներկայացրել բողոք, համաձայն որի «Ադամս» ընկերությունը տասնյակից ավել անձանց, այդ թվում նաև «Ռեքո Ռեքորդս» ընկերության պատվիրատուներին և սկավառակների մանրածախ վաճառքով զբաղվող այլ անձանց նույնաբովանդակ դիմումներ է ուղարկել, որոնցում նշել է, որ ՀՀ-ում հանդիսանում է արտասահմանյան մի շարք ընկերությունների հեղինակային և հարակից իրավունքների բացառիկ իրավատեր: Մինչդեռ Հանձնաժողովի կողմից պարզվել է, որ «Ադամս» ընկերությունը չի հանդիսանում իր կողմից նշված բոլոր օբյեկտների նկատմամբ բացառիկ իրավունքներ ունեցող ընկերություն: Ավելին՝ պարզվել է, որ այդ օբյեկտների մի մասի նկատմամբ բացառիկ իրավունքները պատկանում են «Ռեքո Ռեքորդս» ընկերությանը:

Հանձնաժողովի որոշմամբ «Ադամս» ընկերության գործողությունը որակվել է որպես հասարակության մոլորեցում՝ անբարեխիղճ մրցակցության գործողություն: Օրենքի խախտման համար «Ադամս» ընկերության նկատմամբ կիրառել է պատասխանատվության միջոց և հանձնարարվել վերացնել ու հետագայում բացառել Օրենքի խախտումը:

• Հանձնաժողովը մի շարք տնտեսվարող սուբյեկտների մոտ դիտանցում իրականացնելու ընթացքում հայտնաբերել է, որ վերջիններս գովազդում են «եվրոդիզել» կամ սուպեր տեսակի բենզին, սակայն պարզվել է, որ տվյալ ժամանակահատվածում «եվրոդիզելի» կամ սուպեր տեսակի բենզինի ձեռքբերում չեն ունեցել: Նման վարքագիծը, որը կարող է մոլորեցնել հասարակությանը տնտեսվարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների վերաբերյալ, Հանձնաժողովի կողմից որակվել է որպես հասարակության մոլորեցում՝ անբարեխիղճ մրցակցության գործողություն: Օրենքի խախտման համար 8 տնտեսվարողներին տրվել է նախազգուշացում՝ հանձնարարելով հետագայում բացառել Օրենքի խախտումը:

• Հանձնաժողովը հայտնաբերել է, որ ««Ցարիցինո» Մսամթերքի Կոմբինատ» ընկերությունը հրապարակել է հետևյալ բովանդակությամբ գովազդ. «Միայն տեղական հումքից և բնական բաղադրիչներից: «Ցարսկի պրոդուկտ». թարմ տեղական հումք, բնական բաղադրիչներից»:

Սպառողների կողմից ստացված դժգոհությունների հիման վրա իրականացված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ վերոնշյալ գովազդը չի համապատասխանում իրականությանը, իսկ հումքը չի հանդիսանում տեղական արտադրության: Օրենքի խախտման համար ««Ցարիցինո» Մսամթերքի կոմբինատ» ընկերության նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց՝ հանձնարարելով

հետագայում բացառել Օրենքի խախտումը:

- «Օրգանական գյուղատնտեսության մասին» ՀՀ օրենքի փոփոխությունների համաձայն՝ «օրգանական», «էկոլոգիական», «բիոլոգիական» բառերը կամ դրանց «էկո», «բիո» կրճատ այլ ձևերը կարող են օգտագործվել միայն զուտ օրգանական գյուղատնտեսական արտադրանք արտադրող, շրջանառող, ծառայություններ մատուցող տնտեսավարող սուբյեկտների, թողարկվող, շրջանառվող օրգանական գյուղատնտեսական արտադրանքի, օրգանական գյուղատնտեսական արտադրանքի ծառայությունների մատուցման անհատականացման միջոցներում: Այդ կապակցությամբ, Հանձնաժողովը ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային տեղեկատվական բազայի տվյալների ուսումնասիրության արդյունքում հայտնաբերած 80 այն տնտեսվարող սուբյեկտներին, որոնց ֆիրմային անվանման մեջ առկա են «օրգանական», «էկոլոգիական», «բիոլոգիական» բառերը կամ դրանց «էկո», «բիո» կրճատ այլ ձևերը, տվել է զգուշացում՝ հանձնարարելով իրենց ֆիրմային անվանումներում և այլ անհատականցման միջոցներում «օրգանական», «էկոլոգիական», «բիոլոգիական» բառերի կամ դրանց «էկո», «բիո» կամ կրճատ այլ ձևերի օգտագործումը համապատասխանեցնել ՀՀ օրենսդրության պահանջներին:
- «Սամսունգ» ընկերակցությունը դիմել է Հանձնաժողով՝ հայտնելով որ «Սամսունգ» (Samsung) ապրանքանիշը ներառված է «Vega» (Վեգա) խանութների ցանցի գործընկերների ցանցում, ինչը չի համապատասխանում իրականությանը, քանի որ ընկերությունների միջև 2013 թվականին կնքված պայմանագրի գործողությունը դադարել է: Հանձնաժողովը «Վեգա Ուորլդ» ընկերության պաշտոնական կայքում «Սամսունգ» ընկերակցությանը որպես գործընկեր նշելը, այն դեպքում, երբ ընկերակցությունը չի հանդիսանում ընկերության գործընկեր, որակել է որպես հասարակության մոլորեցում՝ անբարեխիղճ մրցակցության գործողություն և Օրենքի խախտման համար «Վեգա Ուորլդ» ընկերությանը տրվել է նախազգուշացում՝ հանձնարարելով հետագայում բացառել Օրենքի խախտումը:
- Հանձնաժողովի կողմից իրականացված հսկիչ գնումների արդյունքում արձանագրվել է, որ շուրջ 13 տնտեսվարող սուբյեկտներին պատկանող գազալցակայաններում բացի իրացված գազի արժեքից գանձվում է նաև հավելյալ գումար առանց այդ մասին նախապես տեղեկատվություն ներկայացնելու: Հանձնաժողովի որոշմամբ նշված գործողությունները որակվել են որպես հասարակության մոլորեցում, և Օրենքի խախտման համար ընկերություններին տրվել է նախազգուշացում՝ հանձնարարելով հետագայում բացառել Օրենքի խախտումները:

Հաճախակի են դարձել բողոքները կապված մտավոր սեփականության օբյեկտի նկատմամբ այլ տնտեսվարող սուբյեկտի իրավունքի օգտագործման, ինչպես նաև յուրացման փաստերի վերաբերյալ:

Այսպես, Հանձնաժողովը 2014 թվականի ընթացքում հայտնաբերել է այլ տնտեսվարող սուբյեկտի կողմից գրանցված ապրանքային նշանի օգտագործման, գրանցված ապրանքային նշանին շփոթության աստիճանի նման չգրանցված ապրանքային նշանի օգտագործման կամ առաջարկած ապրանքների նկատմամբ և ֆիրմային անվանմանը շփոթության աստիճանի նման ֆիրմային անվանման օգտագործումը կամ ֆիրմային անվանման ապօրինի օգտագործման շփոթության առաջացման՝ անբարեխիղճ մրցակցության գործողության դրսևորման մի շարք դեպքեր, որոնք ներկայացված են ստորև.

- Տնտեսական մրցակցության միջավայրի կարգավորման և վերահսկման

տեսանկյունից կարևորվում են նաև Հանձնաժողովի կողմից կատարվող աշխատանքները կապված դատական մարմիններում բողոքարկված որոշումների պաշտպանության հետ: Այդ պակակցությամբ, 2014 թվականի ընթացքում Հանձնաժողովը շարունակել է իրականացնել դատական ներկայացուցչություն ընդունված որոշումների դատական կարգով բողոքարկման արդյունքում իրականացված դատական վարույթներով: Մասնավորապես, 2014 թվականի ընթացքում ավարտվել են Հանձնաժողովի՝ նախկինում բողոքարկված որոշումների թվով 12 դատական վարույթներ, որոնց արդյունքում դատարանների օրինական ուժի մեջ մտած վճիռներով և որոշումներով Հանձնաժողովի բողոքարկված որոշումները թողնվել են անփոփոխ: 2014 թվականի ընթացքում բողոքարկվել է Հանձնաժողովի թվով 10 որոշում, որոնցից 1-ը մնացել է անփոփոխ, իսկ մնացած 9-ով դատական քննությունը շարունակվում է: Ընդհանուր առմամբ, դատական գործընթացներով ավարտված գործերից կարելի է առանձնացնել հետևյալները.

1. 2011 թվականին բեռնափոխադրումներ իրականացնող թվով չորս ընկերությունների միջև հակամրցակցային համաձայնության կայացման համար Հանձնաժողովը վերջիններիս տուգանել է 100 մլն դրամի չափով: Նշված ընկերություններից մեկը վճարել է նշանակված տուգանքը, իսկ մյուս երեք ընկերությունները Հանձնաժողովի որոշումը բողոքարկել են վարչական և դատական կարգով: Դատական գործընթացները տևել են երեք տարի, և ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից Հանձնաժողովի որոշումը թողնվել է անփոփոխ:

2. 2012 թվականին Հանձնաժողովը մսամթերքի արտադրության և իրացման բնագավառում գործող «Մուշ» և «Նատֆուդ» ընկերությունների անբարեխիղճ մրցակցության գործողությունների վերաբերյալ ընդունել է որոշումներ, որոնցով վերջիններիս նկատմամբ նշանակվել են տուգանքներ: Ընկերությունները Հանձնաժողովի որոշումները բողոքարկել են վարչական և դատական կարգով: Դատական գործընթացը տևել է 2 տարի, և ՀՀ վճռաբեկ դատարանի համապատասխան որոշումներով Հանձնաժողովի որոշումները մնացել են անփոփոխ:

3. Հանձնաժողովի 2012 թվականին ընդունված որոշումներով «Երեքնուկ» և «Սեար Գրուպ» ընկերությունների կողմից սփրեդը որպես կարագ իրացնելը որակել է որպես հասարակության մոլորեցում՝ անբարեխիղճ մրցակցության գործողություն և նշանակվել տուգանք: Ընկերությունները Հանձնաժողովի որոշումները բողոքարկել են վարչական և դատական կարգով, որի արդյունքում Հանձնաժողովի որոշումները մնացել են անփոփոխ:

4. Հանձնաժողովը 2013 թվականին ընդունված համապատասխան որոշումներով «Վեգա Ուորլդ», «Էյջ-Թի Էլեքտրոնիկս», «Այթիմաստեր» և «ԱրմենՏել» ընկերությունների գործողությունները որակել է որպես անբարեխիղճ մրցակցության դրսևորումներ: Նշված ընկերությունները Հանձնաժողովի որոշումները բողոքարկել են դատական կարգով և դատական գործընթացի արդյունքում մնացել անփոփոխ:

Միաժամանակ Հանձնաժողովի որոշումները բողոքարկված ընկերություններից «Չորս ընկեր», «ՍՕՀՕ», «Պրոֆ-իմպրոտեքս», «Մուշ», «Վեգա Ուորլդ», «Էյջ-Թի Էլեքտրոնիկս», «ԱրմենՏել» ընկերությունները արդեն իսկ ամբողջությամբ վճարել են համապատասխան որոշումներով նշանակված տուգանքները, «Նատֆուդ» և «Այթիմաստեր» ընկերություններից տուգանքի գումարի բռնագանձման նպատակով հարուցվել են կատարողական վարույթներ, իսկ «Երեքնուկ» և «Սեար Գրուպ» ընկերությունների նկատմամբ նշանակված տուգանքը բռնագանձելու նպատակով Հանձնաժողովը դիմել է դատարան և գործը գտնվում է քննության փուլում:

3.1) մրցակցային իրավիճակի բարելավմանն ուղղված առաջարկների իրականացման ընթացքի վերլուծությունը

Հանձնաժողովի կողմից իրականացվող ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մրցակցային խնդիրները մեծապես կապված են նաև այլ պետական մարմինների գործունեության հետ: Ուստի ակնհայտ է, որ Հանձնաժողովն ի վիճակի չէ միայնակ պայքարելու առկա մրցակցային խնդիրների դեմ, անհրաժեշտ են բոլոր իրավասու պետական մարմինների ակտիվ և համակողմանի գործողությունները մրցակցային իրավիճակի բարելավման նպատակով: Ըստ այդմ՝ Հանձնաժողովը մշտապես համագործակցել է այլ շահագրգիռ պետական մարմինների հետ: Մասնավորապես, երբ մրցակցային խախտումներ են բացահայտվում այլ պետական մարմինների գործունեության ոլորտներում, Հանձնաժողովը մշտապես տեղեկացնում է այդ մարմիններին առկա բացահայտումների վերաբերյալ և առաջարկություններ ներկայացնում խնդիրների կարգավորման նպատակով:

Մասնավորապես, հեռախոսահամարների տեղափոխելիությանը, «Հարավկովկասյան երկաթուղիներ» ընկերության կողմից օրենսդրության պահանջների պահպանմանը, ընկերությունների կողմից պետական գնումների մասնակցության գործընթացին, արտաքին գովազդային վահանակների միջոցով գովազդի կազմակերպմանը վերաբերող ուսումնասիրություններում բացահայտված խնդիրները, որոնք մրցակցային միջավայրի վրա կարող են ունենալ բացասական ազդեցություն, սակայն գտնվել են Հանձնաժողովի կարգավորման շրջանակներից դուրս, ներկայացվել են այլ պետական մարմիններին՝ դրանք լուծելու նպատակով:

Հանձնաժողովի գործունեության արդյունավետությունը բարձրացնելու, ինչպես նաև հասարակությանը և շահագրգիռ կողմերին Հանձնաժողովի աշխատանքներին իրազեկ և մասնակից դարձնելու նպատակով Հանձնաժողովին կից ստեղծվել է հասարակական խորհուրդ, որի նպատակն է իր կազմում ընդգրկված պետական, հասարակական և գործարար հատվածի ներկայացուցիչների հետ համատեղ աշխատանքի արդյունքում առավել արագ և արդյունավետ արձագանքել հասարակությանն անհանգստացնող մրցակցային խնդիրներին:

Մրցակցային իրավիճակի բարելավմանն ուղղված աշխատանքների շրջանակներում պարբերաբար կազմակերպվում են հանդիպումներ Հասարակական խորհրդի անդամների հետ: Այս հանդիպումների նպատակն է գործարար համայնքի ներկայացուցիչների, սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների և ոլորտային տարբեր մարմինների ներկայացուցիչների հետ քննարկել մրցակցության ոլորտին առնչվող խնդրահարույց հարցեր: Այս առումով, կարևորվում են մասնակիցների առաջարկները, որոնց հիման վրա Հանձնաժողովը վերանայում է իր աշխատանքային գործունեության ուղղությունները և դրանք դարձնում առավել նպատակային ու արդյունավետ:

2014 թվականի փետրվարի 21-ին ՄԱԿ-ի երևանյան գրասենյակում տեղի է ունեցել Հանձնաժողովին կից տնտեսական մրցակցության հարցերով հասարակական խորհրդի հերթական ընդլայնված նիստը, որն առանձնացել է նրանով, որ առաջին անգամ նիստին հրավիրվել էին սիրիահայ գործարարներ, ովքեր ներկայացրել են իրենց մտահոգող հարցերը:

Խորհրդի նիստերի ընթացքում քննարկվել են տնտեսական մրցակցության պաշտպանության հիմնախնդիրներին, այդ թվում՝ գերիշխող դիրքի չարաշահման բացահայտմանը, հակամրցակցային համաձայնությունների հայտնաբերմանը և

անբարեխիղճ մրցակցության գործողությունների կանխարգելմանը, մուտքի խոչընդոտների բացահայտմանը, համակենտրոնացումների նկատմամբ վերահսկողության ուժեղացմանն առնչվող հարցեր:

Գլուխ 4. Հանձնաժողովի 2014 թվականի գործունեության ֆինանսական հաշվետվություն

Հանձնաժողովի ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեի միջոցների հաշվին: ՀՀ 2014 թվականի բյուջեով, որպես Հանձնաժողովի աշխատակազմի պահպանման ծախս նախատեսվել է 293 մլն դրամ, ծախսվել է 286 մլն դրամ:

Աղյուսակ 1

Հանձնաժողովի տարեկան ծախսերը

(Հազար դրամ)

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման տարրերի	***Տարեսկզբին հաստատված տարեկան նախահաշիվ***	***Դրամարկղային ծախս***
Անվանումը		
Ընթացիկ ծախսեր	*293224.00*	*286569.05*
– *Աշխատողների աշխատավարձեր և այլ հավելավճարներ*	*248755,60*	*248755,60*
– *Քաղաքացիական, դատական և պետական ծառայողների պարգևատրում*	*7766,50*	*7766,50*
– *Էներգետիկ ծառայություններ*	*5642,50*	*5636,49*
– *Կոմունալ ծառայություններ*	*130,50*	*130,50*
– *Կապի ծառայություններ*	*7748,70*	*5573,23*
– *Ապահովագրական ծախսեր*	*200,00*	*190,85*
– *Տեղեկատվական ծառայություններ*	*827.80*	*789.18*
– *Ներքին գործուղումներ*	*1845,60*	*1845,60*
– *Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր*	*5971,60*	*5948,97*
– *Համակարգիչների ծրագրայի ծառայություններ*	*500,00*	*499,80*
– *Ներկայացուցչական ծախսեր*	*500,00*	*500,00*
– *Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ*	*2032,00*	*172,50*
– *Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում*	*2826,00*	*2825,50*
– *Գրասենյակային նյութեր և հագուստ*	*1420,70*	*714,23*
– *Տրանսպորտային նյութեր*	*4745,00*	*4742,00*
– *Կենցաղային և հանրային սննդի նյութեր*	*137,10*	*129,60*
– *Հատուկ նպատակային այլ նյութեր*	*2000.00*	*300.00*
– *Այլ հարկեր*	*0,00*	*0,00*
– *Պարտադիր վճարներ*	*174,40*	*48,50*